



ԱՅՉԱՅՉ
ԲՄՄՄ

ԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ



1953





1 1995

Լույս է տեսնում տարին վեց անգամ

Выходит в свет шесть раз в год

ԱՅՎԱԿԱՆ ԲԱՆԱԿ ԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՈԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՈՒՅՍ ԲՈԵՆՈ-ՈԱՄՈՒՄԱԿԱՆ ԺՈՐՈՒՅՈՒՆ

Մտայնողական օգտագործման համար • Для служебного пользования № 000519 *

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈՒԼԵԳԻԱ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Տեր-Գրիգորյան Ե. Գ. (նախագահ)
Քոթանջյան Հ. Ս. (հանդեսի գլխավոր խմբագիր)
Աբրահամյան Ա. Ս.
Ավագյան Ռ. Հ.
Ավետիսյան Մ. Վ.
Գորդինյան Ի. Վ.
Հայրապետյան Վ. Ա.
Հարոյան Հ. Վ.
Հարությունյան Ա. Թ.
Հարությունյան Մ. Հ.
Մարդանյան Ա. Գ.
Մարտիրոսով Լ. Ա.
Միրզոյան Ս. Վ.
Շահումյան Ս. Ն.
Պետրոսյան Ա. Ա.
Պետրոսյան Ա. Ս.
Պետրոսյան Գ. Լ.
Սարգսյան Ա. Գ.
Սարգսյան Ա. Ե.
Սարգսյան Մ. Ս.
Տեր-Թադևոսով Ա. Ի.
Օհանջանյան Մ. Վ.

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի դիմումը «Հայկական բանակ» հանդեսի առաջին համարի լույսընծայման առթիվ 3
Տեր-Գրիգորյան Ե. Գ., Հանդեսի դերի, տեղի և նշանակության մասին. 5
ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ✓
Տեր-Գրիգորյան Ե. Գ., Հայաստանի ռազմական անվտանգությունը 9
ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԵՆՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ✓
Հարությունյան Մ. Հ., ՀՀ վիճված ուժերի շինարարության պայմաններում պորքերի և շտաբների մարտական ու պորահավաքային պատրաստականության և պատրաստության մասին . . . 15
ՕՊԵՐԱՏԻՎ ԱՐՎԵՏՍ ✓ Մ
Մարտիրոսով Վ. Ա., Զորամիավորման պաշտպանական օպերայիայում ջանքերի ծավալման պրոբլեմը 20
ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ✓
Սարգսյան Մ. Ս., Պաշտպանության առանձնահատկությունները լեռնաանտառային տեղանքում ձմեռային պայմաններում . . 23
Հայրապետյան Վ. Ա., Պաշտպանությունում հակառակորդի կրակային խոցման պլանավորումը և կազմակերպումը 26
ՈԱԶՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ
Մարդանյան Ա. Գ., Մոտոհրաձգային զուսարտակի ինժեներային ապահովումը լեռներում 30
ՀԵՏԱԽՈՒՋՈՒԹՅՈՒՆ
Սարգսյան Ա. Ա., Ռազմական հետախույզության խնդիրները հակառակորդի կողմից ՀՀ-ի դեմ ուղղված ագրեսիայի նախապատրաստումը ժամանակին բացահայտելու ուղղությամբ 33
ՀՕՊ-Ի ԶՈՐԹԵՐՈՒՄ
Սարգսյան Ա. Գ., Հակաօդային պաշտպանության պորքերը. դրանց նշանակությունը և կազմակերպական կառուցվածքը. 36

РЕДАКЦИОННАЯ
КОЛЛЕГИЯ

Тер-Григорьянц Н. Г.
(председатель)
Котанджян Г. С.
(главный редактор
журнала)
Абрамян А. С.
Айрапетян В. А.
Ароян А. В.
Арутюнян А. Т.
Арутюнян М. А.
Гордиенко И. В.
Марданян А. Г.
Мартirosов Л. А.
Мирзоян С. В.
Оганджян М. В.
Петросян А. А.
Петросян А. С.
Петросян Г. Л.
Саркисян А. Г.
Саркисян А. Е.
Саркисян М. С.
Тер-Татевосов А. И.
Шахсуварян С. Н.

СОДЕРЖАНИЕ

Обращение Министра обороны РА по случаю издания
первого номера журнала "Айкакан банак" 4
Тер-Григорьянц Н. Г. О роли, месте и предназначении
журнала 7

СТРАТЕГИЯ

Тер-Григорьянц Н.Г. Военная безопасность Армении 41

СТРОИТЕЛЬСТВО ВООРУЖЕННЫХ СИЛ

Арутюнян М. А. О боевой и мобилизационной готов-
ности и подготовке войск и штабов в условиях строитель-
ства ВС РА 47

ОПЕРАТИВНОЕ ИСКУССТВО

Мартirosов Л. А. Проблема наращивания усилий в
оборонительной операции соединения 52

ТАКТИКА

Саркисян М. С. Особенности ведения обороны в горно-
лесистой местности в зимних условиях 55
Айрапетян В. А. Планирование и организация огневого
поражения противника в обороне 58

ВОЕННАЯ ТЕОРИЯ И ПРАКТИКА

Марданян А. Г. Инженерное обеспечение мотострелко-
вого батальона в горах 61

РАЗВЕДКА

Саркисян А. А. Задачи военной разведки по своевре-
менному вскрытию подготовки противника к агрессии против РА 64

В ВОЙСКАХ ПВО

Саркисян А. Г. Войска ПВО: их предназначение и органи-
зационная структура 67

Շապիկի առաջին էջում. Սարդարապատի հուշահամալիրի մի հատված:
Ճարտարապետ՝ Ռ. Իսրայելյան, քանդակագործ՝ Ա. Հարությունյան:
Շապիկի երկրորդ էջում լուսանկարը՝ Գ. Հարությունյանի:
Շապիկի երրորդ էջում լուսանկարը՝ Ռ. Սարգսյանի:
Ներդիրներում լուսանկարները՝ Ա. Շարաթյանի:

На первой странице обложки: фрагмент Сардарапатского мемориального
комплекса. Архитектор Р. Исраелян, скульптор А. Арутюнян.
Фото на второй странице обложки Г. Арутюняна.
Фото на третьей странице обложки Р. Саркисяна.
Фото на вкладышах А. Шарбатяна.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Դ Ի Մ ՈՒ Մ Ը

«ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ» ՀԱՆԴԵՍԻ
ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՐԻ

ԼՈՒՅՍԸՆԾԱՅՄԱՆ ԱՌԹԻՎ

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հարգելի գորականներ:

Պետական անկախության ձևավորման դժվարին ու պատասխանատու ժամանակաշրջանում մեզ վիճակվել է նրա կարեվորագույն տարրերից մեկի՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ստեղծման պատիվը:

Այսօր ես հնարավորություն ունեմ պաշտպանության նախարարության և անձամբ իմ անունից շնորհավորելու ձեզ «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի առաջին համարի լույսընծայման առթիվ:

Մեր զինված ուժերի պատմության մեջ առաջին անգամ հրատարակվում է մի հանդես, որը պետք է կարևոր դեր խաղա ազգային բանակի գիտականորեն հիմնավորված և արդյունավետ կառուցման գործում: Հանդեսը կոչված է անգնահատելի օգնություն ցույց տալու ձեզ՝ զինված ուժերի անձնակազմը դաստիարակելու հայրենիքին նվիրվածության, Հայաստանի ճակատագրի համար պատասխանատվության ոգով, ծառայողական գործունեության տարբեր ուղղություններում ռազմական գիտելիքների յուրացման մակարդակի բարձրացման ոգով:

Ցանկանում եմ ձեզ ստեղծագործական հաջողություններ և հուսով եմ, որ «Հայկական բանակ» հանդեսն արժանի տեղ կգրավի զինված ուժերի կենսագործունեության մեջ և կնպաստի անձնակազմի մարտական ու բարոյական դաստիարակությանը, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի մարտունակության կատարելագործման բնագավառում գիտելիքների հարստացմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

О Б Р А Щ Е Н И Е
МИНИСТРА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ПО СЛУЧАЮ ИЗДАНИЯ ПЕРВОГО НОМЕРА
ЖУРНАЛА "АЙКАКАН БАНАК"

*Уважаемые воины Вооруженных Сил Республики Армения!
В трудное и ответственное время становления
государственной независимости нам выпала честь созда-
ния одного из ее важнейших элементов—Вооруженных Сил
Республики Армения.*

*Сегодня я имею возможность поздравить вас от имени
Министерства обороны и себя лично с выходом в свет
первого номера военно-научного журнала "Айкакан банак".*

*Впервые в истории наших Вооруженных Сил издается
журнал, который должен сыграть важную роль в деле
научно-обоснованного и эффективного строительства
национальной армии. Журнал призван оказать неоценимую
помощь делу воспитания личного состава Вооруженных
Сил в духе преданности Отечеству, ответственности за
судьбу Армении, повышения уровня военных знаний в раз-
личных направлениях служебной деятельности.*

*Желаю вам творческих успехов и надеюсь, что журнал
"Айкакан банак" займет достойное место в жизнедея-
тельности Вооруженных Сил и будет способствовать
боевому и нравственному воспитанию личного состава,
обогащению знаний в области совершенствования боеспо-
собности Вооруженных Сил Республики Армения.*

МИНИСТР ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
С. САРКИСЯН

ՀԱՆՂԵՍԻ ԳԵՐԻ, ՏԵՂԻ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանդեսի հարգարժան ընթերցողներ, մարտական ընկերներ ու բարեկամներ:

Մենք թևակոխել ենք Հայաստանի Հանրապետության պինված ուժերի շինարարության նոր փուլ: Այսօր մենք դրել ենք պինված ուժերի հիմքերը, և այժմ մեր խնդիրն է՝ առավելագույն կարճ ժամկետում դրանք վերածել արդյունավետ գործող կառույցի՝ ենթարկված գլխավոր նպատակին՝ հայրենիքի պաշտպանությանը: Այդ գործում, իմ խորին համոզմամբ, անգնահատելի դեր կխաղա «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսը, որի առաջին համարը ներկայացվում է ձեռք: Հանդեսը մեծ օգնություն ցույց կտա հայրենիքին նվիրվածության ոգով անձնակազմի դաստիարակությանը, ռազմական գիտելիքների մակարդակի բարձրացմանը, մարտում և ամենօրյա գործունեության ընթացքում ստորաբաժանումների ու զորամասերի կառավարման հրամանատարական հատկությունների և գործնական հմտությունների մշակմանը, պինժառայողների շրջանում ռազմական գիտելիքների տարածմանը, Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան պետությունների պինված ուժերի առաջավոր փորձի ուսումնասիրմանն ու ընդհանրացմանը:

Հանդեսում դուք կգտնեք հոդվածներ, որոնք լուսաբանում են՝

— մարտական գործողությունների նախապատրաստման և վարման փորձը,

— մարտի, օպերացիայի մարտական, թիկունքային, տեխնիկական և բժշկական ապահովումը,

— զորքերի մարտական հերթապահությունը, դրա կատարելագործմանն ու համակողմանի ապահովմանն ուղիները,

— ամենօրյա ծառայողական գործունեության մեջ հրամանատարների և զորքերի առավել ուսանելի գործողությունները,

— զորքերի և զենքի կառավարումը, կառավարման ավտոմատ համակարգերը,

— պինվորների մարտական պատրաստության առաջավոր փորձը, այդ պատրաստության կատարելագործմանն ուղիները,

— սերժանտների ու սպաների մեթոդական պատրաստությունը, ինչպես նաև պինժառայողների կողմից ծրագրերի խոր յուրացմանը նպաստող առաջավոր փորձը,

— մարտական գործողությունների և տեղաբաշխման կետերում մարտական հերթապահության ժամանակամիջոցում սպաների հրամանատարական պատրաստման մեթոդիկայի բարելավմանն ուղիները,

— մարտական իրադրության, տեղանքի, տարվա և օրվա տարբեր պայմաններում պորատեսակների ու ծառայությունների կիրառման փորձը և առանձնահատկությունները,

— պորքերի համակողմանի ապահովման կազմակերպումը ամենօրյա մարտական պատրաստության, նրանց կյանքի ու ծառայության ընթացքում,

— տեխնիկայի ու սպառազինության ռապիդնալ շահագործման, դրանք սեպոնային շահագործման փոխադրելու ուղիներն ու եղանակները,

— սինվորների պատրաստումը սինվորական ստորաբաժանումներում, նրանց կոմպլեքսային պատրաստումը պորամասերում՝ ըստ առարկաների,

— պարապմունքների մեթոդիկական ըստ պորատեսակների ու ծառայությունների՝ դրանց գործունեության կատարելագործման վերաբերյալ առաջարկություններով,

— ինչպես Հայաստանում, այնպես էլ այլ պետություններում մարտավարության, օպերատիվ արվեստի, ռազմավարության բնագավառներում, ինչպես նաև սպառազինության, տեխնիկայի և նյութատեխնիկական այլ միջոցների արտադրության ու կիրառման բնագավառում առկա գիտական նվաճումները,

— Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության սինվորական բուհերում և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ուսումնական հաստատություններում մասնագետների պատրաստման առաջավոր փորձը,

— պորքերի և ռազմական արվեստի պատմական փորձը,

— սինվորների, ենթասպաների և սպաների բարոյահոգեբանական պատրաստության խնդիրները, կարգապահ ու պրոֆեսիոնալ սինծառայողների դաստիարակությունը հայրենիքին, բանակին և վիրավաճության ոգով,

— պորքերի մարտական ու պորահավաքային պատրաստականության, պորակոչի և համալրման հարցերը, ուսումնական հավաքները, առաջավոր փորձը սինկոմիսարիատների գործունեության մեջ,

— պորքերի ծառայությունը և դրա դաստիարակչական ուղղվածությունը,

— պորքերի մարտունակության, մարտական պատրաստականության բարձրացմանը վերաբերող այլ կարևոր հարցեր:

Խմբագրական կոլեգիան միշտ կողջունի հանդեսում լուսաբանվող հարցերում ձեր ցուցաբերած նախաձեռնությունը: Մենք մշտապես կուսումնասիրենք նաև հրապարակվող նյութերի վերաբերյալ ձեզանից ստացվող արձագանքները, ինչը անկասկած մեզ կօգնի ձեզ հետ միասին ստեղծելու իրոք հրատապ, ռազմական բնագավառում ժամանակակից պահանջներին համապատասխանող հանդես:

Ծանկանում ենք ձեզ ստեղծագործական հաջողություններ ամենօրյա մարտական գործունեության ասպարեզում, առողջություն և բարեբախտություն ձեր ընտանիքներին:

О РОЛИ, МЕСТЕ И ПРЕДНАЗНАЧЕНИИ ЖУРНАЛА

Уважаемые читатели журнала, боевые товарищи и грузья!

Мы приступили к новому этапу строительства Вооруженных Сил Республики Армения. Сегодня нами заложена основа ВС, и теперь наша задача—в максимально сжатые сроки превратить их в эффективно функционирующую структуру, подчиненную главной цели—защите Родины. В этом деле, по моему глубокому убеждению, неоценимой будет роль военно-научного журнала "Айкакан банак", первый номер которого представляется вам. Журнал окажет вам большую помощь в деле воспитания личного состава в духе преданности Отечеству, повышения уровня военных знаний, привития командирских качеств и практических навыков в управлении подразделением и частями в бою и повседневной деятельности, распространения военных знаний среди военнослужащих, изучения и обобщения передового опыта в ВС РА и зарубежных государств.

В нем вы найдете статьи, освещающие:

- опыт подготовки и ведения боевых действий;*
- боевое, тыловое, техническое и медицинское обеспечение боя, операции;*
- боевое дежурство войск, пути его совершенствования и всестороннего обеспечения;*
- наиболее поучительные действия командиров и войск в ходе повседневной служебной деятельности;*
- управление войсками и оружием, АСУ;*
- передовой опыт боевой подготовки воинов, пути ее совершенствования;*
- методическую подготовку сержантов и офицеров, а также передовой опыт, способствующий глубокому освоению программ военнослужащими;*
- пути улучшения методики командирской подготовки офицеров в период боевых действий и боевого дежурства в пунктах дислокации;*
- опыт и особенности применения родов войск и служб в различных условиях боевой обстановки, местности, времени года и суток;*
- организацию всестороннего обеспечения войск в ходе повседневной боевой подготовки, жизни и службы войск;*

—пути и способы рациональной эксплуатации техники и вооружения, их перевода на сезонную эксплуатацию;

—подготовку воинов в учебных подразделениях, комплексную подготовку воинов в войсковых частях по предметам обучения;

—конспекты занятий по родам войск и службам с предложениями по совершенствованию их деятельности;

—научные достижения в областях тактики, оперативного искусства, стратегии как в Армении, так и в других государствах, а также в области производства и применения вооружения, техники и других материально-технических средств;

—переговой опыт подготовки специалистов в ВВУЗ-ах МО и гражданских учебных заведениях РА;

—исторический опыт войск и военного искусства;

—проблемы морально-психологической подготовки солдат, прапорщиков и офицеров, воспитание воинов, воспитание дисциплинированных и профессиональных военнослужащих в духе преданности Родине, армии;

—вопросы боевой и мобилизационной готовности войск, призыва и комплектования, учебно-сборные мероприятия, переговой опыт в деятельности военкоматов;

—службу войск и ее воспитательную направленность;

—другие важные вопросы, касающиеся повышения боеспособности и боеготовности войск.

Редакционная коллегия всегда будет приветствовать вашу инициативу в вопросах, освещаемых в журнале. Мы постоянно будем изучать также отклики, получаемые от вас на публикуемые материалы, что, несомненно, поможет нам вместе с вами создать действительно актуальный журнал, отвечающий современным требованиям в военной области.

Желаю вам творческих успехов в повседневной боевой деятельности, здоровья и благополучия вашим семьям!

ПРЕДСЕДАТЕЛЬ РЕДАКЦИОННОЙ КОЛЛЕГИИ,
ПЕРВЫЙ ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ РА,
ГЕНЕРАЛ-ЛЕЙТЕНАНТ
Н. ТЕР-ГРИГОРЬЯНЦ

ՌԱԶՄԱՎԱՐ ՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Գեներալ-լեյտենանտ Ն. Գ. Տեր-ԳրիգորՅԱՆԸ, ՀՀ պաշտպանության նախարարի առաջին տեղակալ

Բազմադարյան պատմության ընթացքում Հայաստանի առջև ծառայած է եղել սեփական անվտանգության ապահովման խնդիրը: Ներքին և արտաքին հանգամանքների ազդեցությամբ հաճախ այն առանձնահատուկ սրություն է ստացել: Այսօր, երբ առկա է սահմանակից պետությունների հետ ռազմական շփում, ռազմական տեսակետից երկրի անվտանգության ապահովումը հատուկ տեղ է գրավում պետության գործունեության մեջ: Տարածաշրջանում առկա իրադարձությունների ընթացքը, աշխարհում ու երկրի ներսում կատարվող փոփոխությունները, տեղի ունեցող գործընթացների ոչ միանշանակ բնույթը Հայաստանի Հանրապետության քաղաքական ու վիճակական դեկավարությանը ստիպում են սենեռուն ուշադրություն դարձնել ազգային անվտանգության ապահովման հարցերին, որի բաղկացուցիչ մասերն են անվտանգության քաղաքական, տնտեսական, ռազմական, իրավական, էկոլոգիական և այլ տեսակները: Այդ բնագավառներում ծավալված գործունեությունը նպատակաուղղված է անձի և որպես ամբողջություն վերցված հասարակության և պետության պաշտպանությունը արտաքին սպառնալիքից:

Սույն հոդվածում քննարկվում են ռազմական անվտանգությանը վերաբերող հարցերը: Սակայն ազգային-պետական անվտանգության բոլոր տեսակների փոխադարձ սերտ կապը ստիպում է ուշադրություն դարձնել նաև նրա այլ բաղկացուցիչ մասերի առանձին կողմերին:

Ռազմական անվտանգության էությունը ճանաչելու հնարավորությունը հատկապես ներկայումս պայմանավորված է մեր պետության որակապես նոր վերաբերմունքով՝ պատերազմի և խաղաղության, Ադրբեյջանի հետ հանրապետության ունեցած սահմանում կոնֆլիկտային իրադրության նկատմամբ, իր անկախության, տարածքային ամբողջականության, իր ապագայի համար ԼՂՀ ժողովրդի պայքարի պրոբլեմների նկատմամբ: Ներկայումս մեր երկրի արտաքին քաղաքականության գլխավոր նպատակն է՝ դադարեցնել առճակատումը հարևան երկրի հետ, կանխել պատերազմը և գտնել կոնֆլիկտային իրադրության քաղաքական լուծումներ: Այն կանխադրությք, որ պատերազմն ամենա-

սարսափելի աղետներից մեկն է աշխարհում, և որ այն պետք է բացառվի հասարակության կյանքից, մեզ մոտ բարձրացված է օրենքի աստիճանի: Սակայն մինչև այսօր էլ առաջանում են միջպետական կոնֆլիկտներ, որպիսիք դարեր ի վեր լուծվել են ռազմական ուժով: Ներկայումս աշխարհի պետությունների մեծ մասը բավականաչափ ուժեղ բանակ ունի, մեր տարածաշրջանում այդպիսի պետություններ են Թուրքիան, Իրանը և Ադրբեյջանը: Ուստի քաղաքական նպատակների հասնելու միջոցների վիճակից պատերազմի բացառումը իդեալիզմ և կարճատեսություն կլինի:

Անվտանգությունն ավանդաբար սահմանվում է որպես «մի դրություն, որի դեպքում վտանգ չի սպառնում որևէ մեկին, որևէ բանի»: Բայց ներկայումս «անվտանգություն» նշանակում է ոչ միայն վտանգի բացակայությունը որպես այդպիսին, այլև սպառնալիքի առաջացման դեպքում օբյեկտի (սուբյեկտի) պաշտպանվածության միճակ, աստիճան: Հիմնվելով այս բնորոշման վրա, ինչպես նաև հաշվի առնելով սպառնալիքի յուրահատկությունը՝ ռազմական անվտանգությունը նպատակահարմար է սահմանել որպես արտաքին ու ներքին ռազմական սպառնալիքից պետության, հասարակության ու անձի կենսականորեն կարևոր շահերի պաշտպանվածության դրություն: Այս սահմանման մեջ պաշտպանվածության դրությունը ենթադրում է անվտանգության սուբյեկտի (առաջին հերթին՝ պետության) ընդունակությունը՝ ոչ միայն կանխելու, այլև հաջողությամբ հետ մղելու ռազմական հարձակումը:

ՀՀ ռազմական անվտանգության ապահովումը ձեռք է բերվում պետական գործունեության քաղաքական, ռազմական, տնտեսական, սոցիալական և այլ բնագավառներում անցկացվող միջոցառումների համալիրի շնորհիվ:

Այս համալիրում արտաքին քաղաքական կառույցների դերը հետևյալն է. առաջին՝ գոյություն ունեցող կամ ծագող այնպիսի միջպետական և այլ հակասությունների թուլացման ուղիների հայտնաբերումը, որոնց սրումը հանգեցնում է ռազմաքաղաքական իրադրության լարվածության, երկրորդ՝ այն երկրների հետ բարեկամական կապերի հաստատումը և ամրապնդումը,

որոնք կարող են դաշնակիցներ դառնալ մեր պետության դեմ ռազմական ագրեսիայի սպառնալիքի կամ արդեն սանձազերծված պատերազմի դեպքում, երրորդ՝ կոնֆլիկտային իրադրությունների տեղայնացումը քաղաքական միջոցներով:

Երկրի անվտանգության ապահովման գործում չափազանց մեծ է էկոնոմիկայի դերը: Նրա հնարավորություններից է կախված պետության ռազմական ներուժը, որն արտահայտվում է ինչպես խաղաղ ժամանակ, այնպես էլ պատերազմի ընթացքում անհրաժեշտ քանակի ու որակի ՁՈՒ պահելու, դրանք բավականաչափ սպառազինությամբ, տեխնիկայով և նյութական ռեսուրսներով ապահովելու ընդունակությամբ:

Ռազմական անվտանգության վիճակի վրա ուղղակի ազդեցություն է թողնում պետությունում գործող ուսուցման համակարգը, ժողովրդի իրավական ու բարոյական դաստիարակությունը: Զգալիորեն դրանցից է կախված բնակչության վերաբերմունքն իր անցյալին ու ներկային, նրա պատրաստակամությունը ինքնապոհողության հանուն հայրենիքի ազգային շահերի:

Ռազմական անվտանգության ապահովման գործում խիստ նշանակալի է պետության իրավական կառույցների դերը, քանի որ դրանք մասնակցում են երկրի պաշտպանության հարցերով օրինաստեղծ գործունեությանը և կոչված են հասնելու ընդունված օրենքների և այլ իրավական ակտերի անշեղ կատարման:

Հայաստանի ռազմական անվտանգության համակարգի ուժային կառույցների հիմքը նրա ՁՈՒ-ն են, որոնք պետք է պատրաստ լինեն կատարելու երկու հիմնական գործառույթ՝ ագրեսորի ռազմական հարձակման փորձի կասեցում և նրա ջախջախում, եթե, այնուամենայնիվ, հարձակում կատարվի:

Մեր պետության ռազմական անվտանգության համակարգում բանակի առաջնային դերը թելադրում է այդ առումով նրա հնարավորությունների օբյեկտիվ վերլուծության անհրաժեշտությունը, հատկապես այսօր, երբ Ադրբեջանը, Թուրքիայի և մի շարք այլ երկրների աջակցությամբ, դիմում է ռազմական շարադրման (պրովոկացիայի) մեր սահմաններում, ոտնձգություն է կատարում մեր տարածքային ամբողջականության, մեր քաղաքացիների կյանքի նկատմամբ, փորձում է ցեղասպանության միջոցով ճնշել ԼՂՀ բնակչության ապատության ձգտումը:

Հայաստանի համար ռազմական վտանգի մասին: Ամեն մի պետության պաշտպանվածությունը ռազմական հարձակումից հիմնականում կախված է նրա ՁՈՒ-ի և, որպես ամբողջություն վերցված, երկրի մարտական հզորությունից: Մի շարք պետություններում այդ ուժերը առավել

լազույն մակարդակի վրա պահելը հաճախ հանգեցրել է գերլարվածության և էկոնոմիկայի միակողմանի վարձազանցման, ինչպես նաև սոցիալական խոր ցնցումների: Հայտնի է, որ մեծ տերություններից շատերի անկման գլխավոր պատճառներից մեկը եղել են ծանր բեռի նման բնակչության ուսերին ընկած չափից դուրս մեծ ռազմական ծախսերը: Նման դրության մեջ հայտնըվեց նաև Խորհրդային Միությունը:

Այժմ՝ միջազգային լարվածության թուլացման, բայց և մեր տարածաշրջանում դրա խորացման, տնտեսական լուրջ դժվարություններ տանող մեր պետության կողմից խաղաղափրության ցուցադրման պայմաններում, Հայաստանի ռազմական անվտանգության հիմքում կարող է ժամանակավորապես դրվել մեր պինված ուժերի մարտական հզորության համապատասխանությունը ռազմական սպառնալիքին: Հայաստանի տնտեսական հնարավորությունների աճումը պետք է տարածվի նաև նրա ռազմական հզորության տարբերի վրա: Ռազմական անվտանգության սկզբունքը նպատակահարմար է ձևափոխել ՀՀ ՁՈՒ-ի մարտական հզորության ու մարտական պատրաստականության այնպիսի մակարդակի վրա պահպանման դոկտրինային պահանջի, որն ապահովի ագրեսորի զսպումը և հետմղումը: Նշված սկզբունքի իրացումը պետք է ուղեկցվի տարածաշրջանում ռազմաքաղաքական իրադրության շարունակական հետապոտությամբ և կանխատեսմամբ, մեր պետությանն սպառնացող ռազմական վտանգի աստիճանի որոշմամբ:

Արդ, Հայաստանի համար այժմ գոյություն ունի՝ ռազմական վտանգ, իսկ եթե գոյություն ունի, ապա ի՞նչ աստիճանի: Հարցի առաջին մասին կարելի է տալ միանշանակ պատասխան՝ այո, գոյություն ունի:

Նկատվում է սահմանակից երկրների հետ Հայաստանի ազգային-պետական շահերի խրճրճում և բախում: Ազգի գոյատևման, անկախության, տարածքային ամբողջականության և անձեռնմխելիության համար ԼՂՀ-ի և ՀՀ-ի կողմից մղվող պայքարը մեզ շրջապատող երկրներին դրդում է որոշակի միջոցներ ձեռնարկել պրոբլեմը լուծելու ռազմական ուժով, երկրի շրջափակմամբ, Հայաստանի գեոքաղաքական անբարենպաստ դրության օգտագործումով ժողովրդին խեղդելու ձգտմամբ: Այս ամենը շարունակ կարի հակասությունները, որոնք հղի են առձակատմամբ ու ռազմական մշտական բախումներով:

Գլոբալ մասշտաբով աշխարհը փոխվել է, նախկինում թշնամաբար տրամադրված տերություններում նկատվում է ձգտում՝ վիճելի հարցերը լուծելու բանակցությունների միջոցով:

Սակայն ամեն ինչ չէ, որ ընթանում է այնպես, ինչպես կցանկանայինք մենք: Հաճախ ականատես ենք լինում, թե ինչպես աշխարհի առաջատար պետությունները՝ ԱՄՆ-ը և ՆԱՏՕ-ի որոշ երկրներ, անտեսում են իրենց քաղաքական հայտարարությունները: Մասնավորապես ԱՄՆ-ը, երբ դա իրեն ձեռնառու է, «առանց քաշվելու» հենվում է իր ռազմական ուժի վրա՝ որպես աշխարհում տիրապետող դիրքի ապահովման գլխավոր միջոցի: ՆԱՏՕ-ն իր ՁՈՒ-ն պահում է բարձր մարտական պատրաստականության մեջ, այն դեպքում, երբ Վարշավայի պայմանագրի ՁՈՒ-ն այլևս գոյություն չունեն: Նա անցկացնում է խոշորամասշտաբ պորավարժություններ, որոնցում մշակվում են պատերազմի սկզբնական շրջանում բրկի թեքում ռազմավարական ծավալման և մարտական գործողությունների վարման հարցեր՝ նկատի ունենալով, որ ռիսկի գլխավոր գոտին նախկին ԽՍՀՄ երկրներն են, հատկապես Ռուսաստանը: Այստեղ խիստ կարևոր դեր է խաղում Թուրքիան (ՆԱՏՕ-ի անդամ): Նա առիթը բաց չի թողնում տարածաշրջանային առաջատարի դեր ստանձնելու համար, հատկապես ԽՍՀՄ փլուզումից հետո: Ամերիկյան փորձագետների գնահատմամբ իրականացվում է Հարավում Թուրքիայի գլխավորությամբ լայնամասշտաբ տարածաշրջանային քաղաքական դաշինք ստեղծելու պլան: Այդ ուղղությամբ Թուրքիայի կողմից արդեն մի շարք գործնական քայլեր են արվել, ԽՍՀՄ մի շարք նախկին հանրապետություններ նրա հետ տընտեսական համաձայնագիր են կնքել, օրինակ, ՌԿԿԵԿատանին տրվել է 500 միլիոն դոլլարի փոխառություն՝ նրա համար չափազանց նպաստավոր պայմաններով, Ղազախստանին՝ 200 մլն, Ղրղզստանին՝ 75 մլն: Սկսվել է ազգային սպայական կադրերի պատրաստումը Ադրբեջանի բանակի համար:

Ռազմաքաղաքական իրադրության բարդությունը խորանում է Թուրքիայի, Իրանի, Պակիստանի, Աֆղանստանի, Ռուսաստանի շահերի բախմամբ: Բացի դրանից, նկատվում է իսլամական ֆունդամենտալիզմի ազդեցության աճման միտում, իսկ այդ ֆունդամենտալիզմը կարող է Թուրքիայի կամ Իրանի գլխավորությամբ տարածաշրջանային դաշինքների ստեղծման հիմք հանդիսանալ՝ այդ ուժերի մեջ նախկինում Խորհրդային Միության կազմի մեջ մտնող պետությունների ներգրավմամբ:

Ի մի բերելով շարադրված փաստերը՝ կարելի է պնդել, որ, չնայած աշխարհում լարվածության թուլացմանը և լայնամասշտաբ միջուկային պատերազմի սանձազերծման հավանականության նվազմանը, Հայաստանի համար ռազմական

վտանգը տարածաշրջանում, այնուամենայնիվ, պահպանվում է:

Իսկ Հայաստանի անվտանգության ամրապնդման համար գործունեության ի՞նչ նպատակահարմար ուղղություններ կան: Ամենից առաջ, ինչպես մեզ թվում է, անհրաժեշտ է կարճ ժամկետում պետական մակարդակով մշակել ու հաստատել Հայաստանի ռազմական անվտանգության ապահովման հայեցակարգ և ռազմական դոկտրինա: Առանց այդպիսի հայեցակարգի ՁՈՒ-ի շինարարության պրոբլեմների, ռազմական տեսության ու պրակտիկայի զարգացման հետ կապված հետագա բոլոր խնդիրների լուծումը կարող է չափազանց դժվարանալ: Մեզ համար ամենագլխավորը հանրապետության ՁՈՒ-ի՝ մեր անվտանգության երաշխավորի, ստեղծումը և ամրապնդումն է:

Իսկ ինչպիսի՞ն ենք մենք տեսնում ՀՀ ՁՈՒ-ն, որոնք կոչված են զսպելու ագրեսորին զինված բախումների ու պատերազմների սանձազերծումից, ինչպես նաև հարձակման դեպքում արագորեն ջախջախելու նրան: Այս հարցին օբյեկտիվ պատասխան տալու համար նպատակահարմար է դիմել ռազմական անվտանգության հիմնական սկզբունքներին, որոնք մշակվել են նրա օրենքների, ինչպես նաև արդի պատերազմների նախապատրաստման ու վարման փորձի հիման վրա:

Ռազմական անվտանգության *առաջին սկզբունքը* ագրեսորին զսպելու նպատակով ՁՈՒ-ի նախապատրաստման ու կիրառման կանոնների ամբողջությունն է: Տվյալ սկզբունքի հաջող իրացման համար անհրաժեշտ է, որ գլխավոր հարվածի հավանական ուղղություններում մեր պաշտպանական խմբավորման մարտական հզորությունը առադրեյի լինի նրա հարվածային խմբավորումների մարտական հզորության հետ, որ օդային հարձակումը հետ մղելու համար նախատեսված մեր ՁՈՒ-ի բոլոր կառույցները լինեն քանակական ու որակական այնպիսի վիճակում, որը հնարավորություն տա հաջողությամբ կատարելու այդ խնդիրը: *Երկրորդ սկզբունքը* նախատեսում է ագրեսիան հաջողությամբ հետ մղելու ապահովումը: Գրա էությունն այն է, որ երկիրը կարողանա ագրեսորից ավելի արագ մեծացնել իր պաշտպանական, իսկ այնուհետև, ռազմավարական նախաձեռնությունն իր ձեռքը վերցնելուց հետո, նաև հարձակողական խմբավորումների ուժը: *Երրորդ սկզբունքը* ագրեսիան հետ մղելու ժամանակամիջոցը նվազագույնի հասցնելու անհրաժեշտությունն է: Այս սկզբունքի անտեսումը կարող է հանգեցնել նրան, որ ուժեղ հակառակորդի կողմից մեր երկրի դեմ պատերազմի սանձա-

վերծանան դեպքում ժամանակի ձգձգումը անխուսափելիորեն ակտիվացնի պատերազմի հիմնական օրենքներից մեկի գործողությունը, և պատերազմի ելքը կախման մեջ ընկնի հակամարտ կողմերի ռազմական հզորության հարաբերակցությունից: Այս օրենքի գործողության արդյունքը տվյալ փուլում կարող է ի վնաս Հայաստանի լինել:

Ռազմական անվտանգության թվարկված սկզբունքները տարածվում են ՀՀ ՁՈՒ-ի շինարարության և ինչպես տեղական, այնպես էլ տարածաշրջանային պատերազմներին նրանց նախապատրաստման վրա: Հայկական պետության կազմավորման ժամանակաշրջանում նրա պինված ուժերը պետք է նախատեսված լինեն ռազմական ագրեսիայի գազման ու հետմղման համար:

Պաշտպանության նախարարության և գլխավոր շտաբի ջանքերը, ՀՀ ՁՈՒ-ի շինարարության հայեցակարգին համապատասխան, ուղղված են հենց այդպիսի ՁՈՒ-ի ստեղծման նպատակին: Նախատեսված է դրանց կազմում ունենալ սահմանամերձ գործեր՝ որպես ծածկապաշտպան ուժեր, ցամաքային գործերի շարժունակ ուժեր ու պահեստային ուժեր: Այդ հայեցակարգի հաջող իրացման համար անհրաժեշտ է, որ հայկական նորաստեղծ ՁՈՒ-ի հզորությունը համապատասխանի «Պաշտպանության մասին օրենքում» որոշված իրենց նշանակությանը և ռազմական անվտանգության պահանջներին:

Փորձենք ոչ հասարակ և նրբին այս հարցում կողմնորոշվել ՀՀ բանակի, սահմանապահ զորքերի, քաղաքացիական պաշտպանության, ՆԳՆ, ԱԱՊՎ զորքերի, այսինքն՝ ողջ ՁՈՒ-ի գլխավոր բաղկացուցիչ մասերի հզորության, ինչպես նաև որպես ամբողջություն վերջված պետության ռազմական հզորության որոշ տարրերի վիճակի օբյեկտիվ գնահատման դիրքերից:

ՁՈՒ-ի մարտական հզորությունը, ինչպես հայտնի է, բաղկացած է անձնակազմի թվաքանակից և որակից, պենքի ու ռազմական տեխնիկայի քանակական ու որակական բնութագծերից, ռազմական ինֆրակառուցվածքի անհրաժեշտ տարրերի առկայությունից ու վիճակից և այլն:

Անձնակազմի թվաքանակը: ՀՀ ՁՈՒ-ի շինարարության հայեցակարգի հիման վրա բանակի փուլ առ փուլ ստեղծման պլանի կատարման ընթացքում, սկսած 1992 թվականի վերջից մինչև այսօր, ՁՈՒ-ում լիակատար շրջապատույտով գործի է դրված պինվորների վորակոչի և արձակման ողջ մեխանիզմը (տարեկան երկու վորակոչ և բանակում ծառայության 1,5 տարի): 1992 թվականից հետո ժամանակի ընթացքի համեմատ

վորակոչի պլանը և վորակոչի կարգադրագիրը պինվորական կոմիսարիատները կատարում են 70-ից 95 տոկոսով: Չորակոչի ենթակա պատանիները ճնշող մեծամասնությամբ վորակոչային կետեր են գնում հայրենիքի անվտանգության նկատմամբ պատասխանատվության պայմանով: Այն դժվարությունները, որոնք բանակն ի վիճակի չէ հաղթահարել իր ուժերով, ինքնաբերաբար հանգեցնում են վորամասերի համալրվածության նվազեցման: Սակայն եղած անձնակազմը ՁՈՒ-ին սկզբունքորեն հնարավորություն է տալիս կատարելու իր առջև դրված խնդիրները: Դրա հետ մեկտեղ վորակոչի ապահովման և բանակի համալրման ուղղությամբ երկրի հնարավորություններն անսահման չեն, ուստի պինվորների թվաքանակի համալրումը կատարվում է 2-րդ փուլի պլանի համաձայն՝ հաշվի առնելով երկրի հնարավորությունները:

Անձնակազմի որակը: ՁՈՒ-ի մարտական հզորության այս բաղկացուցիչ մասը գնահատվում է հետևյալ չափանիշներով՝ պինվորական մասնագիտություններին տիրապետելու աստիճանը (մասնագիտական մակարդակը), բարոյական մակարդակը, ֆիզիկական պատրաստականությունը և կարգապահությունը: Այս ամենը պահանջում է էականորեն փոխել երեխաների ու երիտասարդության ուսուցման ողջ համակարգը: Հենց առաջին դասարանից դպրոցականի մեջ պետք է ներարկել սեր, հպարտության պայծառ իր հայրենիքի և նրա պատմական անյայլի նկատմամբ: Անհրաժեշտ է ծավալել տղաների նախնական պինվորական լիարժեք պատրաստության գործը: Պատմության դասավանդման ընթացքում հարկավոր է ուշադրությունը կենտրոնացնել պետության կազմավորման և հայրենիքի պաշտպանության գործում բանակի դերի վրա, իր անկախության համար մեր ժողովրդի մղած ողջ պայքարի ընթացքում պինվորների առավել նշանակալի հաղթանակների վրա, հանուն ժողովրդի ազատության հայերի գիտակցված պոհաբերությունների վրա:

ՀՀ ՁՈՒ-ում մարտական պատրաստության ծրագրի կատարումը պետք է դառնա անխախտելի օրենք, իսկ հայրենասիրության ու պինվորական պարտքի դաստիարակումը դիտվի որպես անձնակազմի հետ տարվող աշխատանքի գլխավոր ուղղություն: Մարտական պատրաստության համար պահանջվում է առանձնացնել մեծ միջոցներ՝ վառելիքաքաղցրային նյութեր, ուսումնական տանկեր, հետևակի մարտական մեքենաներ, կրահատանկային պենք և այլ տեխնիկա, ինչպես նաև սպառազինություն, պինամթերք, հրաձգարանի պանապան սարքավորումներ: Մար-

տական պատրաստության համար առանձնացվող միջոցները հիմնականում կախված են մեր պետության տնտեսական հնարավորություններից, բյուջեից կատարվող հատկացումներից:

Վերջին հաշվով առկա է օրինաչափություն. եթե կա ռեսուրս, կան նաև պրոֆեսիոնալ պիևվորներ, իսկ եթե պիևվորը, ստորաբաժանումը (դասակը, վաշտը, գումարտակը), գորամասը մարտունակ են, նշանակում է մարտական առաջադրանքները կատարվեն արդյունավետորեն ու նվազագույն կորուստներով:

Ձեռքի ու ռազմական տեխնիկայի քանակը և որակը: Բանակները ստեղծվում և պահվում են պիևված պայքար մղելու համար հնարավոր հավառակորդի դեմ, որին հաղթել (հետևաբար և ագրեսիան կասեցնել) կարելի է որակով կամ քանակով, բայց ավելի լավ է՝ դրանց փոքորդմամբ: Իսկ Հայաստանը ի՞նչ ՁՈՒ-ի որակի, ի՞նչ հավանական հավառակորդի նկատմամբ պետք է կողմնորոշվի, որակով ու՞մ պետք է գերազանցի: Ահա թե որն է հարցը, ահա թե որն է որակական չափանիշների առաջնության էությունը: ԽՍՀՄ-ը միշտ կողմնորոշվել է դեպի քանակի առաջնությունը՝ ընդամին ընդունելով որակի շահավետությունը:

Հայաստանը՝ որպես նախկին միութենական հանրապետություն, հարկադրված էր նույն տեսակետն ունենալ: Նախկին 7-րդ բանակից նա ստացել է որոշակի քանակությամբ տեխնիկա և սպառապիևություն: Այդ սպառապիևության որակը և քանակը համապատասխանում էին ժամանակի պահանջներին, 7-րդ բանակի հզորությունը մեծանում էր Հյուսիսային Կովկասի պիևվորական օկրուգի հզորության շնորհիվ, նա համագործակցության մեջ էր Վրաստանի տարածքում գտնվող բանակային կորպուսի և Ադրբեջանի կողմից՝ 4-րդ բանակի հետ:

Եթե քննենք քանակական կողմը, ապա առաջին հայացքից ամեն ինչ բարեհաջող է, սակայն իրականում դրանք հնացած նմուշներ են, այնպես որ, մենք որակական տեսակետից հետ ենք մնում սահմանակից երկրներից: Այսօրվա դրությամբ հայկական բանակը բացահայտորեն համարված չէ ժամանակակից զենքով, մոտոհրաձգային զորամասերն իրենց մարտական ներուժով պիջում են ոչ միայն Թուրքիայի և Իրանի, այլև Ադրբեջանի համանման զորամիավորումներին, մի բան, որ, բնականաբար, անթույլատրելի է:

Տագնապ է հարույցում զենքի և ռազմական տեխնիկայի նոր նմուշների ստեղծման կամ ՀՀ սահմաններից դուրս դրանց գնման հեռանկարը: Մեզ մոտ և ԱՊՀ երկրներում կատարված կործանարար կոնվերսիան կտրուկ կերպով կրճատեց

դրանց գնման հնարավորությունը: Հաշվի առնելով, որ մեր ՁՈՒ-ի առկա տեխնիկան և սպառապիևությունը խիստ շատ են շահագործվում, և այն, որ նույնիսկ խաղաղ պայմաններում ժամանակակից զենքի ու ռազմական տեխնիկայի ստեղծման լրիվ ցիկլը կապում է 8-10 տարի, մենք անխուսափելիորեն մտնում ենք ռազմական անվտանգությունն ապահովելու համար անթույլատրելի այնպիսի դրության, երբ ժամանակակից զենքի գնման հնարավորությունները կրճատվում են ֆինանսական հնարավորությունների պակասի պատճառով և քայքայված, որոշ պիևատեսակների թողարկման ուղղությամբ իր նախկին հնարավորությունները կորցրած պաշտպանական արդյունաբերությունը շատ տարիների ընթացքում չի կարողանա կատարել իր գլխավոր գործառույթները՝ ՁՈՒ-ին բավարար քանակությամբ որոշակի տեսակների ժամանակակից սպառապիևությունն ու տեխնիկա մատակարարել՝ ելնելով երկրի հնարավորություններից, գոնե սահմանակից պետություններից հետ չմնալ զենքի նոր տեսակների ստեղծման գործում, արտակարգ իրադրության պայմաններում պահպանել իր հզորությունն արագորեն մեծացնելու հնարավորությունը: Նման վիճակը հատկապես վտանգավոր է ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի ռազմական դոկտրինայի այն պահանջի իրացման ֆոնի վրա, որ անհրաժեշտ է սպառապիևության ու ռազմական տեխնիկայի մշտական որակական գերազանցություն ունենալ ցանկացած հնարավոր հակառակորդի նկատմամբ: Առավել ևս ներկայումս, երբ Թուրքիան սկսել է գործուն օգնություն ցույց տալ Ադրբեջանին՝ չնայած որ ՆԱՏՕ-ի անդամ է:

Ռազմական ինֆրակառուցվածքը: Սա ենթադրում է անհրաժեշտ պայմանների ստեղծում իրենց օպերատիվ դերի շրջաններում զորքերի արագ ծավալման համար, զորքերի անհրաժեշտ կազմակերպում, զորքերի կառավարման, ավիացիայի բավարարման համակարգի ստեղծում և այլն:

Այսպիսով, ՁՈՒ-ի մարտական հզորության գլխավոր բաղկացուցիչ մասերի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանցից ոչ մեկը ոչ միայն չի հասնում անհրաժեշտ մակարդակի, այլև հետագա նվազման միտում ունի և կունենա, եթե շտապ կարգով չձեռնարկվեն որոշակի միջոցներ: Պետք է նաև նշել, որ ՁՈՒ-ի մարտական հզորության նշված տարրերի քննարկման ժամանակ դրսևորվող զգալի իներցիայի հետևանքով, ինչ-որ ժամանակով դրանց հեռացման դեպքում Հայաստանի ռազմական անվտանգության պահանջները բավարարելու համար մարտական հզորության մակարդակի վերականգնումը չա-

փազանց պրոբլեմատիկ կդառնա:

Իսկ ի՞նչ պետք է անել ստեղծված իրադրության մեջ:

Նախքան այս հարցին պատասխանելը հարկավոր է նշել, որ տվյալ հոդվածում մենք ցանկանում ենք ցույց տալ Հայաստանի ռազմական անվտանգության օբյեկտիվ պատկերը և չենք հավակնում տալու խնդրի լուծումը՝ այնպիսի հանձնարարականների համապարփակ համակարգի մշակումը, որոնց կատարումը հնարավորություն է ընձեռել երաշխավորելու մեր երկրի ռազմական անվտանգությունը նրա կազմավորման ամենաբարդ, դժվար կանխատեսվող ժամանակաշրջանում: Այստեղ խոսք կլինի միայն մի քանի բավականաչափ ակնհայտ առաջարկությունների մասին, առանց որոնց իրացման անլուրջ կլինի դատողություններ անել երկրի ռազմական անվտանգության ապահովման մասին:

Մարտական հպորտության հիմնական բաղկացուցիչ մասերի քննարկումը ցույց տվեց, որ դրանց մեծամասնության վիճակը կախված է մեր պետության պաշտպանության և ռազմական անվտանգության ապահովման համար բյուջետային հատկացումներից: Ներկայումս, երբ Հայաստանը գտնվում է տնտեսական ճգնաժամի մեջ, այդ հարցի լուծման դժվարությունն ակնհայտ է, հատկապես սահմանակից պետությունների հետ ունեցած առձակատման և շրջափակման պատճառով:

Առաջին և ամենագլխավոր բանը, որ անհրաժեշտ է անհապաղ անել Հայաստանի ռազմական անվտանգության մակարդակի բարձրացման համար, բանակի կարիքների համար հատկացումների էական մեծացումն է (ընդ որում՝ իրականում և ոչ թե թղթի վրա):

Սակայն պետության սահմանափակ ֆինանսական հնարավորությունների պայմաններում դա չի կարող չորշափել վանապան, այդ թվում և սոցիալական ծրագրեր: Հատկացումների մեծացումն իրատեսական կլինի միայն այն դեպքում, երբ մատչելի ու համոզիչ ձևով ժողովրդին հասցը-

վի ռազմաքաղաքական վտանգի վիճակի և աճման հեռանկարի, ինչպես նաև ՀՀ ՁՈՒ-ում առկա հնարավորությունների ու դժվարությունների մասին տեղեկատվություն:

Մեր և հարևանների միջև ներկայումս գոյություն ունեցող կոնֆլիկտային վիճակը միայն քաղաքական միջոցներով լուծելը կօգնի կտրուկ կերպով նվազեցնելու վտանգը, հետևաբար և՛ առանձնացվող հատկացումները:

Երկրորդ, անհրաժեշտ իրական միջոցներ ձեռնարկել արմատախիչ անելու երիտասարդների դասալքության պատճառները, բացառել երկրի սահմաններից նրանց դուրս գալը և միջոցներ ձեռնարկել նրանց վերադարձի համար: Այս և այլ միջոցառումները կապահովեն բանակի հետևողական համալրումը ՁՈՒ-ի շինարարության ժամանակամիջոցում:

Երրորդ, առանց որի գործնականում հնարավոր չէ բարձրացնել մեր ՁՈՒ-ի մարտական հպորտությունը, անհրաժեշտ է ռեֆորմներ անցկացնել կրթության բնագավառում՝ զգալիորեն բարելավելով երեխաների ու երիտասարդության հայրենասիրական դաստիարակությունը, ինչպես նաև կարգավորել պաշտպանական արտադրության կոնվերսիան՝ նրա հնարավորությունները հասցնելով այնպիսի մակարդակի, որը հնարավորություն է ընձեռել բանակն ապահովելու ժամանակակից պետքով ու ռազմական տեխնիկայով ինչպես ՀՀ կազմավորման շրջանում, այնպես էլ հեռանկարում: Իհարկե, այս ամենը պետք է անել՝ ելնելով մեր տնտեսական հնարավորություններից:

Վերջում կցանկանայինք նշել, որ հոդվածում շրջափակեցին Հայաստանի ռազմական անվտանգության միայն ռազմավարական տեսանկյունները: Ընդ որում ռազմավարությունը՝ որպես ճանաչողության բնագավառ և ռազմական քաղաքականությունը սպասարկող մեթոդաբանական միջոց, քննարկվում էր ավելի լայն պլանով, քան դա նախատեսված է ռազմագիտության ձևական սխեմայով:

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԶՈՐՔԵՐԻ ԵՎ ՇՏԱԲՆԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՈՒ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գեներալ-մայոր Մ. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՀՀ սինված ուժերի գլխավոր շտաբի սեփականատեր

Ռազմական գործողությունների նախապատրաստման և սկզբնական վերաբերյալ հավանական հակառակորդի հայացքների վերլուծության հիման վրա և հաշվի առնելով մեր ռազմական հայեցակարգի պաշտպանական բնույթը՝ կարելի է ներկայացնել որոշակի պահանջներ ՀՀ ՁՈՒ-ի ծավալմանը (համալրմանը): Այդ պահանջները հանգում են հետևյալին.

— ՁՈՒ-ի շինարարությունը պետք է իրականացվի անհրաժեշտ պաշտպանական բաժնարարության սկզբունքի հիման վրա, ինչպես նաև հավանական հակառակորդի ռազմական նախապատրաստությունները հաշվի առնելով՝ ՀՀ նկատմամբ ռազմական գերազանցության հասնելու նրա հաշվարկների վիճեցումն ապահովելու համար,

— անհրաժեշտ է հավանական հակառակորդի հնարավոր ագրեսիայի հետմղման համար ՀՀ ՁՈՒ-ի պաշտպանական օպերացիաների և մարտական գործողությունների ժամանակին նախապատրաստում,

— անհրաժեշտ է բարձրացնել խաղաղ ժամանակ և պատերազմի նախօրյակին մեր հետախույզության հուսալիությունը և արդյունավետությունը, որպեսզի ժամանակին ընդունվեն համապատասխան միջոցառումներ ինչպես ռազմական, այնպես էլ տնտեսական տեսակետից պատրաստակա՞նության առավելագույն բարձրացման համար,

— պետք է ընդունել ՁՈՒ-ի մարտական պատրաստակա՞նության և համալրման բարձր տեմպերի ապահովման գործնական միջոցառումներ՝ հակառակորդի հնարավոր պրոֆոկայիտն քայլերը և ռազմական գործողությունների հանկարծակիության հասնելու փորձերը խափանելու համար, ցանկացած ագրեսիայի հետմղման մարտական խնդիրների հաջող կատարման համար:

Նշված պահանջները պայմանավորում են համապատասխան խնդիրներ խաղաղ իրադրությունից պատերազմական իրադրության վորքերի անցումն ապահովելու համար, երբ կառավարման մարմիններում, զորամասերում և հիմնարկություններում իրականացվում են ըստ մարտական պատրաստակա՞նության աստիճանների կազմված պլանով նախատեսվող միջոցառումներ,

որոնք, իրադրության և հակառակորդի հարձակման սպառնալիքի համեմատ, կարող են հաջորդաբար իրականացվել վարից վեր կամ միանգամից՝ ՁՈՒ-ն հասցնելով մարտական պատրաստակա՞նության բարձրագույն աստիճանի առանց անցնելու միջանկյալ աստիճանները:

Այս հիման վրա մշակվում է մեր ժամանակակից ռազմական դոկտրինան: Նրա գլխավոր առանձնահատկությունն այն է, որ, օբյեկտիվորեն բխելով մեր հասարակարգի բնույթից, քաղաքականությունից, այն ծառայում է գլխավոր խընդրին՝ թույլ չտալ պատերազմ, պաշտպանվել հնարավոր ագրեսիայից:

ՀՀ գեղաքաղաքական դրությունը պարտավորեցնում է ամենօրյա գործունեության մեջ գլխավոր ուշադրությունը դարձնել վորքերի մարտական և վորահավաքային պատրաստակա՞նությունը այնպիսի մակարդակի վրա պահելու վրա, որն ապահովի հայրենիքի պաշտպանության սրբազան պարտքի արժանավայել կատարում:

Ռազմական վտանգը մեր հանրապետության համար չի վերացել, Թուրքիայի և Ադրբեջանի հետ հարաբերություններում դրական փոփոխություններ դեռևս չեն նկատվում: Ռուսի, որպեսզի մեր ժողովրդի խաղաղ կյանքը հուսալիորեն ապահովված լինի, մենք պետք է հանրապետության պաշտպանակա՞նությունը պահենք խելամիտ և հուսալի մակարդակի վրա:

ՀՀ հետագա վարգայման, նրա նորացման, խաղաղ աշխատանքի երաշխիքի ապահովման, պատերազմի սպառնալիքի վերացման, անվտանգության ամրապնդման համար արտաքին բարենպաստ պայմանների ստեղծման նպատակին է ծառայում մեր պետության խաղաղասիրական քաղաքականությունը: Նրա արտաքին քաղաքական գործունեության հիմքում դրված է նոր քաղաքական մտածողության հիմնական ելակետային սկզբունքը՝ ոչ մի պատերազմ չի կարող քաղաքական, տնտեսական և այլ նպատակների հասնելու միջոց դառնալ:

Մեր երկրում սկսել են վերախմաստավորվել ստեղծված քաղաքական-ստրատեգիական իրադրությունը, նոր սոցիալական և ռազմական իրողությունները, վերանայվում են քաղաքակիրթ հասարակության կյանքում պատերազմի դերի

ըմբռնումները: Դրա հետ միաժամանակ մշակվում են նոր միջոցառումներ փոփոխված պայմաններում երկրի հուսալի պաշտպանության ապահովման ուղղությամբ, արժարժվում է նոր ստեղծվող ՁՈՒ-ի պարգայման գործում որակական պարամետրների անցնելու անհրաժեշտության գաղափարը:

Չորքերի մարտական պատրաստականությունը կախված է պորահավաքային ռեսուրսների կոմպլեկտավորման որակից և ենթադրում է համալիր միջոցառումներ՝ ուղղված ՁՈՒ-ի նոր դրության անցմանը, պատերազմի կարիքների բավարարման համար երկրի տնտեսական և պետական հաստատությունների վերակառուցմանը:

Պետությունների մեծ մասում պորահավաքը սկսել է կիրառվել համընդհանուր պինժառայության պարտիքի հիման վրա ձևավորվող պակվածային բանակների ստեղծմամբ (18-րդ դարի վերջ, 19-րդ դարի սկիզբ):

Ստրկատիրական և ֆեոդալական հասարակարգում այսօրվա ըմբռնմամբ պորահավաք չի եղել, սակայն այն ժամանակ էլ պատերազմ սկսվելուց առաջ սովորաբար տարբեր դասերից մարդկանց հավաքում պինվոր էին տանում, ստեղծվում էին աշխարհագործեր, աճում էր պենքի, հանդերձանքի, փոխադրամիջոցների արտադրությունը, բարձրացվում էին հարկերը, կուտակվում էին նյութական տարբեր միջոցներ պատերազմի կարիքների համար:

Չորահավաքի ըմբռնման մեջ էական փոփոխություններ կատարվեցին 20-րդ դարի սկզբից, առանձնապես առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, որը հսկայական մարդկային պահվածներ ներքաշեց բանակ և մեծ լարման հասցրեց տնտեսությունը: Այդ պատերազմում բանակ պորակոչված մարդկանց ընդհանուր թիվը հասավ շուրջ 70 միլիոնի: Պատերազմի կարիքների բավարարման համար մեծապղծեցին պենք, ռազմական տեխնիկա և հանդերձանք արտադրող պետական գործարանների հպորությունները, ներգրավվեցին նաև մասնավոր շատ ֆիրմաներ, օգտակար հանաժողովների արդյունահանման և վերամշակման ձեռնարկություններ, երկաթուղիներ, կապի միջոցներ, ֆինանսական իստակարգը, գիտության ու տեխնիկայի նվաճումները: Կտրուկ աճեց պետությունների ռազմական ներուժի կախվածությունը տնտեսությունից:

Երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբը և ամբողջ ընթացքը հետագա փոփոխություններ առաջացրին պորահավաքի բնույթի մեջ և մասշտաբներում: Այդ պատերազմը հաստատեց պորահավաքի հաջող անցկացման կախվածությունը պետության տնտեսական ներու-

ժից, մեծ չափով բացահայտեց այն նշանակությունը, որ ունի պորահավաքի համար պետության ամբողջ տնտեսության, հասարակական, գիտական և այլ հաստատությունների փոխադրումը ռազմական դրության: ՁՈՒ պորակոչվեց 110 միլիոնից ավելի մարդ:

Ներկայումս կարևորագույն պրոբլեմ են պորահավաքի ժամկետների կրճատումը և նրա անցկացման պլանաչափությունը: Այս պրոբլեմների լուծումը կառավարման բարձրագույն պետական մարմինների կարևորագույն գործառույթներից մեկն է: ԱՄՆ-ում, օրինակ, պորահավաք հայտարարելու որոշումը ընդունում է Լախագահը, Անգլիայում՝ թագավորը, ԳՖՀ-ում՝ կանցլերը, Ֆրանսիայում՝ նախագահը, Հայաստանի Հանրապետությունում, «Զինապարտության մասին օրենքի» 69-րդ հոդվածի համաձայն, ՀՀ վրա պինված հարձակման կամ արտաքին սպառնալիքի առկայության դեպքում՝ Լախագահը:

Հաջող պորահավաքի կարևորագույն գործոններն են.

— մարդկային ռեսուրսների առկայությունն ու նախապատրաստումը պորամասերի համալրման և ծավալվող պինվորական կապմավորումների ձևավորման համար:

— խաղաղ ժամանակ սպառազինության, ռազմական տեխնիկայի և այլ նյութական միջոցների անհրաժեշտ պաշարի կուտակումը,

— ՁՈՒ-ի պինապարտ պահեստայինների, ինչպես նաև հավաքման ենթակա փոխադրամիջոցների հաշվառումը, տեղեկացումը և հավաքումը:

Հայտնի է, որ աշխարհում ոչ մի երկիր չի վիճակի չէ իր ՁՈՒ-ն խաղաղ ժամանակ պահել պատերազմի պլանին համապատասխան լրիվ ծավալված. դա կպահանջեր նյութական արտադրության ոլորտից կտրել մարդկային առավել աշխատունակ ռեսուրսները, բանակում կուտակել և ստեղծել հսկայական քանակությամբ տեխնիկա, որը կործանվում է արդյունաբերության, շինարարության և գյուղատնտեսության ոլորտներից:

Ժամանակակից պորահավաքը բարդ գործընթաց է՝ պայմանավորված ապագա պատերազմի, առանձնապես նրա սկզբնական շրջանի բնույթով և դրանից բխող պահանջներով, ըստ որոնց պորքերը պետք է մշտապես պատրաստ լինեն համալրման, իսկ պինկոմիսարիատները՝ պորակոչի խստորոշ ժամկետներում լրացուցիչ մարդկային ռեսուրսներ բանակ ներգրավելուն:

Ժամանակակից պորահավաքին ներկայացվող հիմնական պահանջներն են.

— պորքերի պորահավաքային ծավալումը կարճ ժամկետներում. արդի պայմաններում ժա-

մանակի տարրը պորահավաքը հաջող անցկացնելու և մարդկային ու նյութական ռեսուրսները հակառակորդի հնարավոր անսպասելի հարվածներից պահպանելու վճռորոշ գործունեության մեկն է,

— մարտական տագնապի ազդանշանով պորքերի արագ ապակենտրոնացումը մշտական տեղաբաշխման կետերից և անցումը իրենց համար նախատեսված համալրման շրջաններ,

— յուրաքանչյուր պորամասի համալրման ինքնավարության ապահովումը. այստեղ ինքնավարությունը նշանակում է դրանց ունակությունը՝ ինքնուրույն համալրվելու (լրացրահավաք անելու) և իրենց լրիվ մարտական պատրաստության բերելու սահմանված ժամկետներում, ամենաբարդ պայմաններում և արագ փոփոխվող իրադրության մեջ:

Անհրաժեշտ է, որ պորահավաքային պլանի կազմման, նրա հերթական կամ ընթացիկ ճշտումների ժամանակ պիկնոմիսարիատները եւ պորամասերը տեղական ռեսուրսներով պորքերի համալրման բոլոր հիմնական հարցերը լուծեն համագործակցված, պորքերի մարտական ու պորահավաքային պատրաստականության մշտական բարձրացման իրենց համար ընդհանուր խնդրի կատարման տեսանկյունից:

Համագործակցություն ասելով հասկանում ենք շրջանային ու քաղաքային պիկնոմիսարիատների և պորքերի այն գործողությունները, որոնք իրար հետ համաձայնեցված են ըստ անցկացման խնդիրների, ժամանակի ու տեղի, ուղղված են շրջանի տարածքում համալրվող պորամասերի պլանային և արագ լրացրահավաքին ու մարտունակության ապահովմանը: Այդ ամենը պետք է իրականացվի մշտապես, խաղաղ ժամանակ պորահավաքային պլանների մշակման սկզբից և շարունակվի մինչև համալրումից (լրացրահավաքից) հետո պորամասի մեկնումը ըստ օպերատիվ նշանակման:

Համագործակցության ապահովման հետ կապված հարցերը կարող են տարբեր լինել և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կախված լինել պորահավաքային առաջադրանքների ծավալից, համալրման պայմաններից, պորակոչվող և մատակարարվող ռեսուրսների պատրաստման ժամկետներից, քանակից և այլ հանգամանքներից:

Քիմկոմիսարիատներն ու պորամասերը պորքերի համալրման ընդհանուր խնդիրը լուծում են ամենակարճ ժամկետներում: Այս կարևոր գործի հաջողությունն անպատկերացելի է առանց պորամասերի և պիկնոմիսարիատների մշտական և սերտ համագործակցության, փոխադարձ գործնական կապի: Այդ է ՀՀ ՁՈՒ-ի մարտական և պորահավաքային պատրաստության ապահովման պայմաններից մեկը:

Պատերազմի բնույթը և մեր հավանական հակառակորդի գործողությունների սկզբունքները մեզ հարկադրում են ունենալ մշտական պատրաստության պորամասեր՝ տեղակայված սահմանամերձ գոտում: Սակայն հնարավոր է, որ այդ ուժերը բավարար չլինեն պաշտպանական խընդիրներ լուծելու համար: Հետևաբար, ջանքերի ծավալումը կկատարվի պատրաստության տարբեր ժամկետներով պորամասերի կազմավորման հաշվին:

Սեղմ ժամկետներում ՁՈՒ-ի հաջող համալրումը ենթադրում է ժամանակին, հանգամանակից և համակողմանի պորահավաքային պլանավորում, որի հիմքը պորահավաքային պլանի մշակումն է:

Ձրահավաքային պլանը այն փաստաթղթերի ամբողջությունն է, որոնցում որոշվում են ՁՈՒ-ի պորահավաքային ծավալման, տնտեսությունը և տարբեր պետական հաստատություններ ռազմական պայմաններին համապատասխան գործունեության ռեժիմի փոխադրելու միջոցառումների անցկացման բովանդակությունը, ծավալը, կարգը և ժամկետները:

Ձրահավաքային պլանով նախատեսվող բոլոր միջոցառումները մշակվում են խաղաղ ժամանակ և արտացոլվում են որոշակի ժամկետներում գործող համապատասխան փաստաթղթերում: Ձրահավաք հայտարարվելու դեպքում մշակված պլանի համաձայն բոլոր պորամասերը անցնում են պատերազմական շրջանի գործունեության ու հաստիքների, կատարվում են պորակոչ ու պորահավաքային ռեսուրսների մատակարարում պորքերին:

ՁՈՒ-ի պորահավաքային պլանի մշակման անհրաժեշտությունը ծագել է 19-րդ դարի սկզբին, երբ երևան եկան կադրային բանակներ, որոնք խաղաղ ժամանակ պահվում էին կրճատ կազմով, իսկ պատերազմ սկսվելու դեպքում աճում էին մի քանի անգամ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի նախապատրաստման ժամանակ որոշ երկրներում զգալի փոփոխության ենթարկվեցին պորահավաքի եղանակները, ինչը և պահանջում էր պորահավաքային պլանի կատարելագործում: Օրինակ՝ Գերմանիայում, երբ ֆաշիստներն իշխանության գլուխ անցան, պորահավաքային միջոցառումների տեմպերն ու թափը զգալիորեն ուժեղացան: 1938 թ. աշնանը Չեխոսլովակիայի վրա ֆաշիստական Գերմանիայի հարձակման նախապատրաստման ժամանակ («Գրիոն-պլան») պորահավաքը առաջին անգամ անցկացվեց ռեզերվը ուսումնական հավաքների և պորավարժությունների ներգրավելու անվան տակ: Փաստորեն պատերազմական ժամանակի ՁՈՒ-ի ծավալումը Գեր-

մանհայրում իրականացվեց 1939-1940 թթ. պորահավաքային պլանի հիման վրա, որը նախատեսում էր՝ արագացված պորահավաքային ծավալում պատերազմի անմիջական նախօրյակին, ընդհանուր կամ մասնակի պորահավաքի անկացում առանց պաշտոնապես պատերազմ հայտարարելու («X» տարբերակ), պորահավաքի իրականացման հնարավորությունն պաշտոնապես պատերազմ հայտարարելով («Մոք» տարբերակ), դիվիզիաների քանակի կրկնակի ավելացում (52-ից մինչև 103) և պորահավաքային ռեսուրսների պորակոչ 3,24 միլիոն մարդ ընդգրկող բանակի կազմավորման համար:

Երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ մի շարք երկրների գլխավոր շտաբներ կազմեցին պորահավաքային պլան և պատերազմի սկզբում ու հետագա ընթացքում այդ պլանի հիման վրա ծավալեցին ՁՈՒ-ն: Նրանց փորձը ցույց տվեց, որ պլանավորման դեպքում կարևորագույն նշանակություն ունեն ՁՈՒ-ի պորահավաքային ծավալման ժամկետների կրճատումը և գաղտնիության ապահովումը, ինչպես նաև օպերատիվությունը, ինչը թույլ է տալիս ժամանակին արձագանքել ռալմաքաղաքական իրադրության փոփոխման հնարավոր փոփոխություններին:

Խաղաղ ժամանակ բանակի համալրումն անձնակազմով մնում է որպես բարդ գործընթաց: Մեր հանրապետությունում փուլ առ փուլ պետք է ապահովվի խաղը համալրման երկու բաղադրիչների՝ սպայանագրով և պորակոչով, իրավահավասար գոյությունը: Այս մտնեցումը բնորոշ է աշխարհի շատ երկրների համար և նպատակահարմար է, քանի որ թույլ է տալիս բազմաթիվ խնդիրներ լուծել:

Պետք է նշել, որ սպայանագրային ծառայությունը առայժմ թույլ է ապրում անձնակազմով ՀՀ ՁՈՒ-ի ընդհանուր համալրման վրա: Նման դրության գլխավոր պատճառներն են՝ քաղաքացիներին սպայանագրով պիկետաբանական ծառայության ընդունելու համար պորքերում և պինկոմիսարիատներում ամբողջական իրավական բազայի բացակայությունը, սպայանագրային ծառայության կազմակերպման և ղեկավարման փորձի և անհրաժեշտ կառույցների բացակայությունը, դրանում քաղաքացիների ներգրավման համար կոլեկտիվ խթանների անբավարարությունը:

Լուրջ պրոբլեմ է քաղաքացիների հերթական պորակոչների անցկացումը: Այստեղ գլխավորն է պինծառայության կանչվող քաղաքացիների համակազմի կրճատումը, ինչը բացատրվում է պորակոչի տարկետումների թվի մեծացմամբ:

Բանակի մարտական պատրաստությունը

շատ բանով կախված է պորահավաքային ռեսուրսներով, առաջին հերթին պահեստապորից պորակոչվող քաղաքացիներով պորամասերի համալրման որակից:

Զինվորական կրթությամբ մասնագետների պատրաստումը և կուտակումը պահեստապորում, որ արվում է պլանային ուսումնական հավաքներում պորամասերի համալրման որակը պահպանելու համար, հիմնական մեթոդ է: Սակայն Միության տրոհումից հետո պատրաստության այս փորձված համակարգը գործնականում արդեն աշխատել չի կարող:

Ինչպես նախկին Միության շատ հանրապետություններում, այնպես էլ մեզ մոտ տընտեսությունը շուկայական հարաբերությունների փոխադրելու վերաբերյալ ընդունված օրենսդրական ակտերը ոչ լրիվ են արտացոլում պորահավաքային պատրաստության և ուսումնական վաքային միջոցառումների ֆինանսավորման կարիքներն ու կարգը: Տվյալ հարցի չլուծվածությունը հանգեցրել է նրան, որ շատ ձեռնարկությունների ղեկավարներ հրաժարվել են պորահավաքային պատրաստության պարտավորությունների կատարումից: Հավաքներում ներգրավվող պահեստային պիկետաբանային վրա կատարվող ծախսերի ֆինանսավորումը պետք է իրականացվի ՀՀ պաշտպանության նախարարության միջոցով, պետական բյուջեից այդ նպատակների համար հատկացվող միջոցների հաշվին: Զինապարտներին աշխատանքային գործունեությունից կտրելու, տեղեկացումը կազմակերպելու, նրանց հավաքների անցկացման վայր տանելու և վերադարձնելու հետ կապված ծախսերը ծածկվում են այն վայրի տեղական բյուջեի հաշվին, որտեղ նրանք պիկետաբանական հաշվառման մեջ են: Այս դրույթները սպանելում են լրացուցիչ ուսումնասիրություն և յրավաբանական ամրապնդում ՀՀ համապատասխան օրենսդրական ակտերով:

Ավտոմոբիլային տրանսպորտի պատրաստությունը ժողովրդական տնտեսության պորահավաքային պատրաստության մի բաղկացուցիչ մասն է, որը կատարվում է խաղաղ ժամանակ՝ ավտոմոբիլային տրանսպորտի նկատմամբ ՁՈՒ-ի պահանջմունքների բավարարման համար և պատերազմի ժամանակ՝ ռազմական, էվակուացիոն և ժողովրդատնտեսական փոխադրումների համար:

Ապագա պատերազմն իր ուժեղ թափով, օպերայիաներով, լայնամասշտաբ մակրոլրային հարձակողական գործողություններով՝ մեծ շարժունակություն ունեցող պորքերի մասնակցությամբ, պահանջում է պորամասերի հանդերձավոր-

րում բարձր դիմացկունությամբ արագընթաց և ամենագնաց մեքենաներով, ինչպես նաև ընդհանուր նախանշանակում ունեցող ժամանակակից ավտոմեքենաներով՝ անձնակազմի նյութատեխնիկական միջոցների փոխադրման համար: Ուստի տեխնիկայի առկայությունը և որակական վիճակը էական ազդեցություն կունենան պորքերի մարտական գործողությունների ընթացքի վրա:

Ժողովրդական տնտեսության տեխնիկայի մարտական և պորահավաքային պատրաստությունը որոշվում է ամենից առաջ նրա տեխնիկական վիճակով, ուստի բոլոր մեքենաները մշտապես տեխնիկական վիճակում պահելը տեղական տնտեսական և փնտրական մարմինների կարևորագույն խնդիրն է:

Ժողովրդական տնտեսության ավտոմոբիլային տրանսպորտի մարտական և պորահավաքային պատրաստության բարձրացման կարևորագույն միջոցներից մեկը նախկինում ստեղծված փնտրական տիպի ավտոշարասյուններն են, որոնք խաղաղ ժամանակ արդեն կազմակերպված օրգանիզմներ են՝ պատրաստ անհապաղ ներգրավվելու փնտրված ուժերի կազմում:

Զինվորական տիպի ավտոշարասյունների աշխատանքը ցույց է տալիս, որ դրանք մեծ մասամբ ժողովրդատնտեսական փոխադրումների արդյունավետ աշխատանքը հաջողությամբ զուգակցում են ԶՈՒ-ում ներգրավված ավտոմոբիլներին և նրանց վարորդների պորահավաքային որակյալ պատրաստման հետ: Դրան նպաստում են տիպային հաստիքները, ավտոմոբիլների տեխնիկական սպասարկման և նորոգման խըստիվ պլանայնությունը, ինժեներատեխնիկական անձնակազմի ավելի նպատակահարմար տեղաբաշխումը, որի հետևանքով բարձրանում են անձնակազմի կազմակերպվածությունն ու աշխատանքային կարգապահությունը և համապատասխանաբար բարելավվում է տրանսպորտային շարասյունների տեխնիկական վիճակը:

Ավտոմոբիլային տրանսպորտի պորահավաքային բարձր պատրաստության ապահովման հարցերի ճիշտ լուծումն անպատկերացելի է առանց տեղական մարմինների հետ շրջանային փնտրմիսարհատների գործնական սերտ կապերի ու համագործակցության, առանց ավտոմոբիլային տրանսպորտի պորահավաքային պատրաստության ապահովման բոլոր միջոցառումները համապատասխանեցնելու ժողովրդական տնտեսության շահերին:

Զինվորական կոմիսարիատները պետք է համառոտեն հասնեն ավտոհավաքակայանի պորահավաքային պատրաստության հարցերի ընդ-

նարկմանը նեղ կազմով նիստերում, այդ հարցերը ներկայացնեն կառավարության և պաշտպանության նախարարության լուծմանը:

Այս բոլոր միջոցառումները կնպաստեն ժողովրդատնտեսական տեխնիկայի պորահավաքային պատրաստության բարելավմանը, պորահավաքային պլանի ռազմության ապահովմանը, պատերազմի ժամանակ ձևավորվող և ծավալվող պորամասերի ժամանակին և որակով համալրմանը ժողովրդատնտեսական տեխնիկայի բոլոր տեսակներով:

Շրջանային փնտրմիսարհատները, ՀՀ ԶՈՒ-ի գլխավոր շտաբի կազմավորահավաքային գլխավոր վարչությունը իրենց գործնական աշխատանքում պարտավոր են պարբերաբար անցկացնել գործուն վերահսկողություն շրջանում և հանրապետությունում հաշվառման մեջ գտնվող ժողովրդատնտեսական տեխնիկայի պորահավաքային պատրաստության նկատմամբ: Վերահսկողությունն իրականացվում է ամենամյա տեխնիկական ստուգումներով, ավտոտնտեսությունների անձնակազմի հետ մարզումային պարապմունքների կազմակերպմամբ՝ տալով ուսումնական կարգազբեր, ուսումնական հավաքների համար տեխնիկա մատակարարելիս նրանց ստուգմամբ, ավտոտրանսպորտային ծառայության մասնագետ սպաների թվից հասարակական հիմունքներով մշտապես գործող հանձնաժողովների ստեղծմամբ և այլն:

Այս բոլորը, անկասկած, պետք է դրականորեն ներգործի ավտոտրանսպորտի պորահավաքային պատրաստության վրա:

Վերջում անհրաժեշտ է նշել, որ շտաբներում, պորքերում և փնտրմիսարհատներում տարվող պորահավաքային աշխատանքը չպետք է լինի միայն նրանց մենաշնորհը: Կարևոր է, որ նրանով լրջորեն պատվեն համապատասխան հրամանատարներն ու պետերը, իսկ պորահավաքային միջոցառումներն ավելի լրիվ համաձայնեցվեն օպերատիվ պլանների հետ: Անհրաժեշտ է նաև, որ մեր բոլոր ջանքերն ուղղված լինեն գլխավոր խնդրի լուծմանը, այն է՝ ապահովել բոլոր պորամասերի մշտական պատրաստությունը արագ համալրման և լրիվ մարտական պատրաստության բերելու համար, իսկ փնտրմիսարհատների ջանքերը պետք է ուղղված լինեն պորակոչի կազմակերպված անցկացմանը և պորահավաքային ռեսուրսների մատակարարմանը առավելագույն կարճ ժամկետներում:

Այս պետական կարևորագույն խնդրի լուծման վրա մենք պետք է աշխատենք հաստատակամորեն և համառոտեն:

Օ Պ Ե Բ Ա Տ Ի Վ Ա Բ Վ Ե Ս

ԶՈՐԱՄԻՎՈՐՄԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՕՊԵՐԱՑԻԱՅՈՒՄ ՁԱՆՔԵՐԻ ԾԱՎԱԼՄԱՆ ՊՐՈՔԼԵՄԸ

Գնդապետ Լ. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՈՎ, ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի օպերատիվ վարչության պետ

ՀՀ զինված ուժերում պաշտպանական օպերացիաներում ջանքերի ծավալման պրոբլեմի մասին ձևավորված տեսակետները պայլի վերանայման կարիք են պահում: Դա պայմանավորված է մի շարք հանգամանքներով:

Պատերազմների փորձը ցույց է տալիս, որ հարձակվող կողմը ռազմական բախման հենց սկզբից բոլոր հիմնական ուղղություններում ուժերի և միջոցների վճռական գերակշռություն է ունենում: Ներխուժումը հաջողությամբ հետ մղելու համար հատուկ նշանակություն ունի պորամիավորումների ու պորամասերի կազմում ջանքերի ծավալման համար նախատեսված բավականաչափ շարժունակ պորամբավորումների, ինչպես նաև միջոցների առկայությունը: Սակայն ճակատային գծի անընդհատ մեծացման և առաջին էջերնի ուժեղացման անհրաժեշտության դեպքում պարզվում է նվազում է հիշյալ խմբավորման ստեղծման հնարավորությունը: Բացի դրանից բացասաբար են ազդում նաև սպառնալիության ու ռազմական տեխնիկայի նոր նմուշների մատակարարման անևշան չափերը:

Մինևույն ժամանակ հավանական հակառակորդը սենուն ուշադրություն է դարձնում մեր խմբավորումների պատասխան գործողությունների ձախողմանը: Բննարկվող խնդրի լուծումը հակառակորդի զինվորական մասնագետները համարում են հարձակողական օպերացիայի նպատակին հասնելու կարևորագույն պայման: Ուստի կարելի է պնդել, որ այդ խնդրի լուծման գործում ներկայումս ջանքերի ծավալման օբյեկտիվ անհրաժեշտության և պորամիավորումների սուղ հնարավորությունների միջև եղած խզումը խորանում է: ՀՀ ՁՈԻ-ի կազմավորման փուլում այդ հարցը ստանում է առանձնակի հրատապություն:

Պետք է հաշվի առնել նաև, որ տարածաշրջանում ռազմաքաղաքական ուժերի տեղաբաշխման մեջ եղած փոփոխությունների կապակցությամբ առաջ են եկել նոր հայացքներ ջանքերի ծավալման մասին: Կանգ առնենք դրանցից առավել կարևորների վրա:

Օպերացիաների բնույթի ու բովանդակության փոփոխությունները, դրանց տարածքային մեծ թափը ենթադրում են ոչ միայն առաջին էջերնի պորքերի, այլև այն ռեզերվների ջանքերի

ծավալման նպատակահարմարությունը, որոնք պայքարում են ճեղքած-ներխուժած հակառակորդի և դեսանտային դիվերսիոն ուժերի դեմ: Դա պահանջում է խելամտորեն պլանավորել ջանքերի ծավալման համար ներգրավված պորքերի կիրառումը, ինչպես նաև դրանց պատրաստությունը՝ ավելի վտանգավոր ուղղություններ տեղափոխվելուն:

Հավանական հակառակորդի էական գերազանցությունը կարող են լինել խոցման միջոցների ներգործության հեռավորությունը, ավիացիայի քանակը և որակը: Դա պայմանավորում է պատերազմի օդային փուլի նշանակության մեծացումը: Այս կապակցությամբ, դեռ նախքան հակառակորդի ցամաքային խմբավորումների հարձակման անցնելը, անհրաժեշտ է ծավալել օդային հարձակումը հետ մղելու ջանքերը, միջոցներ ձեռնարկել նրա խմբավորումների առաջխաղացումը ձախողելու, ՀՕՊ-ի խախտված համակարգերը վերականգնելու, ունեյած ուժերի և միջոցների մարտունակությունը մեծացնելու, պորքերի, ինչպես նաև տեղական բնակչության բարոյահոգեբանական վիճակը պահպանելու ուղղությամբ:

Ապագայում օպերացիաների ընթացքում ջանքերի ծավալման վրա էական ազդեցություն կունենա խոցման միջոցների հզորության ու հեռահարության աճումը ի հաշիվ սպառնալիության մեջ հարվածային-կրակային համալիրների, ակնապայթուցիկ արգելափակումների (դիստանցիոն ակնաախտման), ՌԷՊ-ի միջոցների ավելացման: Այս պայմաններում երկրորդ էջերններն ու ռեզերվները մարտի մեջ պետք է մտցնել միայն այն դեպքում, երբ մյուս բոլոր հնարավորությունները սպառվել են: Բացի դրանից, ջանքերի ծավալման վրա ազդում են երկրի ֆիզիկաաշխարհագրական առանձնահատկությունները, նրա ինֆրակառուցվածքի և օպերատիվ սարքավորման վարգայման մակարդակը: ՈՒստի առաջադրված պրոբլեմը պահանջում է ավելի լայն քննարկում և հաջող լուծման ուղիների որոնում:

Դժվարանց տեղամասերով ու բազմաթիվ բնական արգելքներով լեռնային տեղանքը նպաստում է սովորական պայմանների համեմատ ավելի փոքր ուժերով ամուր պաշտպանու-

թյան ստեղծմանը: Լեռնապանգվածները, լեռնաշղթաներն ու դրանց ճյուղավորումները բնական լավ բնագծեր են՝ լայն տեսադաշտով ու գնդակոծման հնարավորությամբ, բազմաառիկ և շրջանաձև պաշտպանություն ստեղծելու համար: Սակայն մեծաքանակ մեռյալ տարածքների ու աննկատ մատույցների, ինչպես նաև մեր պորքերի կողմից չբաղեցված տեղամասերի առակայությունը հակառակորդին հնարավորություն է ընձեռում ծածուկ մոտենալու մեր պաշտպանությանը, փոքր ուժերով կարճ ժամանակում թափանցելու թիկունք:

Չորամիավորման (չորամասի) երկրորդ էջերը և ռեպերվը դասավորվում են կարևորագույն ուղղություններում մեկ կամ մի քանի շրջաններում, այն հաշվով, որ ապահովվեն նշված բնագծերում չորաշարժերը և ժամանակին մարտի բռնվելը, ինչպես նաև շրջանցող հակառակորդի ջախջախումը:

Օպերայիաներում ջանքերի ծավալման հայեցակարգը ընդհանուր առմամբ այնպիսի տեսական դրույթների ու հանձնարարականների ամբողջությունն է, որոնք արտացոլում են՝ ջանքերի ծավալման էությունը, նպատակը, գնահատման չափանիշները և կառուցվածքը, կազմակերպման և իրականացման սկզբունքները, ծավալմանը ներկայացվող պահանջները, դրա կազմակերպման միտումները, ժամանակակից մեթոդները և իրականացման արդյունավետ եղանակները:

Օպերայիաներում ջանքերի ծավալումը հնարավոր չէ առաջին էջերնի պորքերի թվաքանակի պարզ ավելացմամբ՝ երկրորդ էջերները, ռեպերվները մարտի մեջ մտցնելու կամ կրակային հարվածներ հասցնելու հաշվին: Այս հասկացությունը, մեր կարծիքով, շատ ավելի լայն ու տարողունակ է:

Կարծում ենք, որ ջանքերի ծավալման էությունը այնպիսի փոխկապակցված համալիր միջոցառումների անցկացումն է, որոնք ուղղված են պահանջվող ժամանակամիջոցում և ընտրված ուղղություններով հակառակորդի վրա ներգործման ուժերի ավելացմանը, ինչպես նաև սեփական պորքերի պաշտպանվածության մեծացմանը, նրանց մարտունակության ու բարոյահոգեբանական վիճակի բարելավմանը (վերականգնմանը):

Ջանքերի ծավալման նպատակը օպերատիվ իրադրության կայունացումն է, նախաձեռնությունը, ուժերի և միջոցների ընդունելի (պահանջվող) հարաբերակցության հասնելը, որն ապահովի պաշտպանական օպերայիայի խնդիրների հաջող լուծումը:

Ջանքերի ծավալման չափանիշներ կարող են

լինել՝ օպերայիայի հիմնական խնդիրների հաջող լուծման հավանականությունը, կարևոր ուղղություններում ուժերի ու միջոցների հարաբերակցության բարելավման աստիճանը, պաշտպանության գոտում հակառակորդի հարձակման տեմպերի, ինչպես նաև մեր հակագրոհող խմբավորումների հարձակման տեմպերի փոփոխությունները:

Անցած պատերազմների փորձի վերլուծության արդյունքները հաստատում են, որ ջանքերի ծավալման գործում հաջողությունը ձեռք է բերվում միայն հիմնական, նրան հատուկ սկզբունքների պահպանման դեպքում:

Օպերայիայում ջանքերի ծավալումն իրականացվում է առավել սպառնալի ուղղություններում հիմնական օպերատիվ խնդիրների լուծման համար, իրականացվում է պահանջվող (հաշվարկային) ժամանակին խստիվ պահպանումով և կոնկրետ օպերատիվ արդյունքի հասնելու համար: Վաղաժամ գործողությունները կարող են հանգեցնել նրան, որ լրացուցիչ կարգով մարտի մեջ մտցված ուժերը ժամանակից շուտ սպառեն իրենց հնարավորությունները:

Խոցման միջոցների մարտական հնարավորությունների պզալի աճումը պահանջում է օպերայիայում ջանքերի ծավալում այն հաշվով, որ հնարավոր լինի կանխել հակառակորդին: Մեր կարծիքով, այդ սկզբունքի իրականացումը կնպաստի հակառակորդի ջախջախմանը ավելի փոքր կամ հավասար ուժերով:

Չորքերի համալիր օգտագործման և նրանց սերտ համագործակցության կազմակերպման միջոցով ջանքերի ծավալումն էականորեն բարձրացնում է պորքերի գործողության արդյունավետությունը:

Պակաս նշանակություն չունեն նաև մյուս սկզբունքները՝ ջանքերի ծավալման կայուն կառավարումը, մարտի մեջ մտցվող ուժերի ու միջոցների համակողմանի ապահովումը, պորքերի բարձր աստիճանի պատրաստականությունը՝ անհապաղ սկսելու գործողություններ, այդ թվում՝ սկզբնապես չալանավորված ուղղություններում:

Հաշվի առնելով քննարկված սկզբունքները՝ կարելի է ձևակերպել օպերայիաներում ջանքերի ծավալմանը ներկայացվող պահանջները: Դրանցից հիմնականներն են՝ ժամանակը չխախտելը, գաղտնիությունը, հանկարծակիությունը, մարտի մեջ մտցվող ուժերի կազմի օպտիմալությունը, ուժերի, միջոցների, հարվածի (պորքերի կենտրոնացման) տեղի ընտրության գործում առաջնությունը, գործողությունների կազմակերպման և իրականացման ճկունությունը:

Մեր պայմաններում, երբ չեն բավականացնում ուժերն ու միջոցները, անհրաժեշտ է հա-

տուկ ուշադրություն դարձնել ջանքերի ծավալման մանրակրկիտ ու համակողմանի կազմակերպմանը: Ինչպես ցույց է տալիս փորձը, տվյալ հարցի լուծումը պետք է սկսել նախօրոք և իրականացնել օպերայիայի նախապատրաստման հետ միաժամանակ և նրա ծավալման ընթացքում:

Ընդամին հարկավոր է՝

առաջին՝ ունենալ ջանքերի ավելացման համակարգ, որն ընդգրկի հետախույզության ջանքերի ծավալումը, գլխավոր ուղղություններում հակառակորդի վրա ներգործող ուժերի մեծացումը, ջանքերի ծավալումը այնպիսի գործողությունների արդյունավետ եղանակների կիրառմամբ, որոնք ապահովեն հակառակորդի ջախջախումը ավելի փոքր (հավասար) ուժերով, գլխավոր խնդիրները լուծող պորամիվորումների ու պորամասերի ուժեղացումը անձնակազմով, զենքով և ռազմական տեխնիկայով,

երկրորդ՝ իրադրության հանգամանալից գնահատման հիման վրա որոշել հակառակորդի խմբավորումների սպասվելիք հարվածների ոչ միայն ուղղությունը, այլև ուժը,

երրորդ՝ որոշել (կանխագուշակել) հակառակորդի կողմից ջանքերի ծավալման հնարավոր ընթացքը և բացահայտել օպերայիայի առավել լարված ժամանակամիջոցները:

Օպերայիայում ջանքերի հաջող ծավալման նպատակով անհրաժեշտ է ժամանակին ստեղծել հատկապես այդ խնդրի լուծման համար նախատեսված բավարար պորամիվորում, որի հիմքը,

մեր կարծիքով, պետք է կազմեն խոցման հուժկու միջոցներ:

Մարտական գործողությունների փորձը ցույց է տալիս, որ պաշտպանական օպերայիաներում ջանքերը կարող են ծավալվել հակառակորդին հասցվող կանխող հարվածներով, հրետանին կարևորագույն ուղղություններում կենտրոնացնելով, հակառակորդի գլխավոր ուժերը նախապատրաստված կրակային պարկերի մեջ ներքաշելով:

Ջանքերի հաջող ծավալման նպատակով հարկավոր է համալիր միջոցներ ձեռնարկել համակողմանիորեն ապահովելու համար այդ նպատակով նախատեսված ստորաբաժանումների պաշտպանությունն ամենից առաջ հակառակորդի հետախույզությունից և ավիայիայի հարվածներից:

Ջանքերի հաջող ծավալման համար կարևոր է հանգամանորեն համաձայնեցնել պորքերի փոխադարձ ճանաչման հարցերը՝ սեփական կրակային հարվածներից հնարավոր կորուստները բացառելու նպատակով: Ջանքերի ծավալման գործում որոշակի արդյունքի կարելի է հասնել պորքերի լավ ուսուցման և հրամանատարական կազմի մասնագիտական վարպետության շնորհիվ: Լայնորեն հայտնի է այն ճշմարտությունը, որ կովել պետք է ոչ թե ուժով, այլ խելքով: Այդ առումով անհրաժեշտ է շտաբների ու պորքերի արդյունավետ, օպերատիվ ու մարտական պատրաստականություն:

ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԵՌՆԱԱՆՏԱՌԱՅԻՆ ՏԵՂԱՆԲՈՒՄ ՁՄԵՌԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Գիներալ-մայոր Մ. Ս. ՍԱՐԳՍՅԱՆ, ՀՀ ՊՆ մարտական պատրաստության վարչության պետ

Հայաստանի լեռնային շրջաններում և ԼՂՀ ռազմական գործողությունների թատերաբեմում գերակշռում է լեռնաանտառային տեղանքը, ուստի պաշտպանության կազմակերպման և վարման վրա այդպիսի տեղանքի ազդեցության առանձնահատկությունների իմացությունը առաջնակարգ նշանակություն ունի բոլոր մակարդակների հրամանատարների համար: Ձմռան պայմաններում այդ առանձնահատկություններն ավելի մեծ նշանակություն են ստանում և պահանջում են առանձնակի ուշադրություն իրենց նկատմամբ:

Լեռնաանտառային տեղանքը բնութագրվում է դժվարամատչելի տեղամասերով, անտառային վանգվածներով, մեծ բնական խոչընդոտներով, որոնք բարենպաստ ազդեցություն են ունենում ամուր պաշտպանության ստեղծման և ապահովման գործում: Այդ տեղամասերում ամուր պաշտպանություն կարելի է ապահովել ավելի փոքրաքանակ ուժերով ու միջոցներով, քան հարթավայրային տեղանքի սովորական պայմաններում: Լեռնաանտառային տեղանքն իր տիրապետող բարձունքներով, ճյուղավորումներով և լեռնաշղթաներով, անտառապատ տեղամասերով իրենից ներկայացնում է ինքնին տրբված բնագիծ, որը հարմար է ամուր, բազմահարկ, շրջանաձև պաշտպանություն, լայն տեսադաշտով ու գնդակոծման հնարավորությամբ հենակետեր ստեղծելու համար: Այն կաշկանդում է հակառակորդի հարձակողական գործողությունները, ինչպես նաև հնարավորություն է տալիս հակառակորդի ծածուկ պահելու իր մարտակարգերի կառուցվածքը և կրակային համակարգը, լայնորեն կիրառելու ականապայթուցիկ և ինժեներային այլ արգելափակոցներ ու կառույցներ: Դրա հետ մեկտեղ լեռնաանտառային տեղանքը սահմանափակում է վորաշարժը, դժվարացնում է տանկերի, այլ վրահապատ տեխնիկայի ու հրետանու լայն կիրառումը, որոշակի բարդություններ է ստեղծում կառավարման ու համագործակցության ապահովման համար: Մինևույն ժամանակ այն նպաստում է վորքերը հակառակորդի դիտարկումներից թաքցնելուն, հնարավորություն է ընձեռում ծածուկ վորաշարժեր իրականացնելու:

Բազմաթիվ աննկատ մատուցյների, յու-

րային վորքերի կողմից չբաղեցված մեռյալ տարածքների առկայությունը հեշտացնում է հակառակորդի գործողությունները՝ աննկատ մոտենալու մեր դիրքերին ու հենակետերին, հնարավորություն է տալիս միջտարածքներով թափանցելու մեր թիկունքը, այնտեղ օգտագործելու դիվերսիոն-հետախուզական խմբեր, օդային դեսանտներ, հարվածելու թևերին ու թիկունքին: ՈՒստի և այդպիսի տեղամասերում առանձին պահակակետերի, ինժեներային-տեխնիկական արգելափակոցների ու միջոցների ստեղծումը, ինչպես նաև հետախուզության ուժեղացումը առաջնահերթ նշանակություն են ստանում: Այս ամենը անհրաժեշտ է դարձնում լեռնանցքերը, անցուղիները, թունելները, հանգույցները, ճանապարհները, իշխող բարձունքները մեր ձեռքում ամուր պահելը՝ այնտեղ ստեղծելով դասակների կամ վաշտերի հենակետեր, որոնք միմյանց հետ կրակային կապ կունենան:

Հակառակորդի գործողությունները կաշկանդելու, շրջանցումներն ու թևանցումները կանխելու նպատակով հենակետերի միջտարածքներում պետք է կազմակերպել հետախուզություն, պարեկություն, ստեղծել դարաններ, ականադաշտեր, ինժեներային այլ արգելափակոցներ: Ցանկալի է, որ այդ արգելափակոցները հարեն բնական արգելք հանդիսացող դժվարամատչելի տեղամասերին:

Լեռնաշղթաների երկայնքով անցնող տեղամասերը պաշտպանելիս անհրաժեշտ է հուսալիորեն փակել լեռնանցքերը, դեպի թիկունք տանող ճանապարհները, հատկապես տանկավտանգ ուղղությունները:

Նպատակահարմար է առաջին խրամատը (դիրքը) պատրաստել հակառակորդի կողմն ուղղված լանջերին: Չորքերն այդ բնագծերում տեղավորելն ապահովում է լավ տեսադաշտ և հակառակորդին գնդակոծելու հնարավորություն, նրան ստիպում է իր ուժերը ստորոտում ծավալել պաշտպանվող վորքերի կրակային ներգործության տակ:

Լեռնաշղթայի լայնքով պաշտպանության անցնելիս պետք է պաշտպանությունը կառուցել առաջին հերթին լեռնագագաթի և հակառակորդի կողմն ուղղված լանջի պահպանման հաշվով: Նման դեպքում ապահովվում է կիրճերի և հո-

վիտների տեսանկիւնը, դրանց գնդակոծման հնարավորությունը:

Պաշտպանության խորությունն ստեղծվում է բարձունքների հակադիր լանջերին դիրքերի սարքավորման հաշվին:

Կիրճի պաշտպանության ժամանակ առաջնակարգ նշանակություն է ստանում կիրճի մուտքերին հարող բարձունքներն իր ձեռքում պահելը: Անհրաժեշտ է այդ բարձունքներում ստեղծել հենակետեր, կիրճերի երկայնքով՝ էջերունայված պաշտպանություն: Հիմնական ուժերը պետք է դասավորել այնպես, որ հնարավոր լինի լիովին հսկել կիրճը: Բուն կիրճում պետք է տեղադրել աննշան ուժեր՝ լայնորեն օգտագործելով դարանակալման հակատանկային միջոցներ:

Դարանների լայն օգտագործումը պայմանավորված է լեռնաանտառային տեղանքում պաշտպանության առանձնահատկություններով: Դրանք սարքավորվում են պաշտպանության աննկատ մատույցներում, թեքում, իսկ որոշ դեպքերում՝ նաև պաշտպանության խորքում:

Ձևնային պայմաններում լեռնաանտառային տեղանքում պաշտպանության կարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ առանձին ուղղություններում ու տեղամասերում հենակետեր կարող են ստեղծվել նաև ջոկի համար: Եթե հարթ տեղանքում կիրառվում են առավելապես դասակի և վաշտի հենակետեր, ապա լեռնաանտառային տեղանքում դրանք հնարավոր են դառնում նաև ջոկի համար:

Ջոկի հենակետեր լայնորեն կիրառվել են ԼՂՀ պինված ուժերի կողմից Օմարի լեռնանցքում, Հադրութի, Մարտունու, Մարդակերտի շրջանների լեռնային բնակավայրերի մատույցների պաշտպանության ժամանակ:

Այդպիսի դեպքերում անհրաժեշտություն է առաջանում թեքեր ու միջտարածքներն ապահովելու մեծ տրամաչափի կրակային միջոցներով:

Հայկական լեռնաշխարհի՝ ռազմական գործողությունների թատերաբեմում ձմեռը բնութագրվում է առանձնահատուկ դաժանությամբ, ձյան հաստ շերտով, ցածր ջերմաստիճանով, ինչը և առաջին պլան է մղում, բայց լեռնաանտառային տեղանքում պաշտպանությանը բնորոշ այլ գործոններից, սպառազինության, մարտական և այլ տեխնիկայի, ինչպես նաև պաշտպանության միջոցների նախապատրաստումը ցածր ջերմաստիճանի պայմաններում աշխատելու համար, թաքստոցների սարքավորումը անձնակազմի տաքանալու և ցրտահարումից փրկվելու համար, ամրաշինական կառույցների մաքրումը և արգելափակույցների վերականգնումը առատ ձյունից հետո և այլն:

Ցանկացած պորամասի և ստորաբաժանման

համար պաշտպանության ճակատի լայնությունը ձմռանը լեռնաանտառային տեղանքում կարող է շատ տարբեր լինել: Այն կախված է պանապան գործոններից, այդ թվում՝ տեղանքի բնույթից, հարձակվող հակառակորդի ուժերից ու միջոցներից, նրա հարձակման համար պիտանի ուղղությունների քանակից, տարողունակությունից և կարևորությունից: Պաշտպանության խորությունը նույնպես կախված է տեղանքի ճանապարհային ցանցի, հարձակվող հակառակորդի ուժերի ու միջոցների բնույթից:

Լեռնաանտառային տեղանքը բարենպաստ նշանակություն է ունենում արգելափակույցների պարզամասն համակարգով գոտիների, դարանների ու դիտակետերի ստեղծման համար:

Ձմռանը լեռնաանտառային տեղանքում պաշտպանության ժամանակ մարտակարգը բնորոշվում է ուժերն ու միջոցներն ըստ ուղղությունների դասավորելու անհրաժեշտությամբ: Որպես կանոն, այն դասավորվում է երկու էջերում և ներառում է նույն տարրերը, ինչ որ սովորական պայմաններում պաշտպանության դեպքում: Երկէջերն մարտակարգը բնորոշ է լայնատարած հովիտների պաշտպանության համար:

Այն տեղանքում, որտեղ հնարավոր չէ հակառակորդի կողմից տանկերի և այլ պրահատեխնիկայի կիրառումը, նպատակահարմար է մարտակարգը կառուցել մեկ էջերում՝ հիմք ունենալով վաշտի, դասակի, ջոկի հենակետերը, ինչպես նաև համապորային ուժեղ, շարժունակ ռեզերվը:

Պաշտպանության կազմակերպումը: Ձմռան պայմաններում լեռնաանտառային տեղանքի բնույթը էական ազդեցություն է ունենում նաև հրամանատարի աշխատանքի բովանդակության, որոշումների մշակման և ընդունման ընթացքի վրա:

Ձմռանը լեռնաանտառային տեղանքում պաշտպանության վերաբերյալ որոշում ընդունելիս հրամանատարի աշխատանքի հաջորդականությունը գրեթե նույնն է, ինչ որ սովորական պայմաններում:

Հակառակորդին գնահատելիս հրամանատարն ամենից առաջ պետք է ճշտի ձմռանը լեռնաանտառային տեղանքում մարտական գործողություններ վարելու նրա պատրաստվածության աստիճանը, օդային դեռնաանտառային պորամասերի ու ստորաբաժանումների առկայությունը նրա մոտ, հիմնական ներգործության ուղղությունները, հարձակման հավանական եղանակները:

Իր ուժերն ու միջոցները գնահատելիս, բայց դրանց վիճակն ու մարտական պատրաստու-

թյունը որոշելուց, նա պետք է հատուկ ուշադրություն դարձնի ձմռանը լեռնաանտառային տեղանքում հաջողությամբ գործելու համար դրանց պատրաստ լինելուն: Իբրև արդյունք՝ նա պետք է նպրակայություն անի իր ուժերի և միջոցների նպատակահարմար բաշխման մասին, որոշի, թե որ ուղղությունները պետք է պաշտպանել մեծ ուժերով և որոնք՝ ավելի փոքր ուժերով, ինչպես պետք է կառուցել մարտակարգը, ինչ լրացուցիչ միջոցներ կարելի է ձեռնարկել սեփական գործարարական ստորաբաժանումների մարտական պատրաստության բարձրացման ուղղությամբ:

Հարևաններին գնահատելիս հրամանատարը պարտավոր է ճշտել և իմանալ նրանց պաշտպանության բնույթը կից թեևրում, գործողությունները տեղանքի այն միջտարածքներում, որոնք պատված չեն յուրային վորքերի կողմից, իմանալ, թե ինչպես կգործեն նրանց երկրորդ էջերուններն ու ռեզերվները: Որպես հարևաններին գնահատելու արդյունք՝ հրամանատարը պետք է որոշի իր միջոցառումները թեևրի և կցատեղերի հուսալի ապահովման համար, որպեսզի թույլ չտա այդ տեղամասերով հակառակորդի ճեղքումը դեպի թիկունք, ինչպես նաև լրացուցիչ հարցեր, որոնք պետք է հարևանների հետ համաձայնեցնել այդ տեղամասերի պաշտպանության և հակառակորդի հարձակման հետմղման համար:

Տեղանքը գնահատելիս հրամանատարը պարտավոր է որոշել և խորապես վերլուծել հակառակորդի հարձակման համար առավել մատչելի ուղղությունները, կենտրոնացման հավանական շրջանները, նրա շարժման ուղիները դեպի ծավալման ու գրոհի բնագծեր, մեռյալ տարածքները և իր պաշտպանության աննկատ մատույցները, այն կարևոր շրջանները, որոնց պահումից կախված է պաշտպանության կայունությունը, վորաշարժերի ուղիները մի ուղղությունից մյուսը, մատակարարման և էվակուացման ուղիները:

Տարվա եղանակը, կլիմայական պայմանները գնահատելիս հաշվի է առնվում, թե որքանով են հնարավոր լեռնային փլուզումները, քարաթափները, ձյունահյուսքերը, սելավները, ցամաքած գետերի հունների գործառուումը, ծառերի տապալումը, ուժեղ անձրևներից և ձնհալից ձորակների հեղեղումը և այլն:

Խնդրի պարզումից և իրադրության գնահատումից հետո հրամանատարի որոշման մեջ, բացի սովորական հարցերից, պետք է տեղ գտնի նաև այն հարցը, թե ինչպես կարելի է ոչնչացնել նահանջող հակառակորդին, թիկունք թափանցած դիվերսանտներին և դիվերսիոն-հետախուզական խմբերին:

Պաշտպանական մարտի վարումը: Որպես

կանոն, պաշտպանական մարտերը սկսվում են հեռավոր մատույցներում՝ հարված հասցնելով հարձակվող հակառակորդին: Առավել արդյունավետ են այն հարվածները, որոնք հակառակորդի գլխավոր ուժերին հասցվում են լեռնանցքերը, ճանապարհների հանգույցները, նեղ հովիտները, գետերն ու կիրճերն անցնելիս, ինչպես նաև գրոհի համար ծավալվելիս, կենտրոնացման վայրերում:

Ապահովման գոտում տեղավորված վորքերը կանգնեցնում են հակառակորդին, պզալի կորուստներ են պատճառում նրան՝ հաջողաբար իրենց ձեռքում պահելով ճանապարհներին մոտ իշխող բարձունքները և պաշտպանության համար նպաստավոր մյուս տեղամասերը՝ օգտագործելով բնական խոչընդոտները և արգելափակույցները, նեղ անցատեղերը, ակտիվորեն կիրառելով դարանակալումները և պաշտպանելով հենակետերը:

Առաջավոր պաշտպանական գծի անմիջապես մոտակայքում տանկերի և հետևակի գործողությունները հետ են մղվում բոլոր կրակային միջոցներով, հատկապես նռնականետների կիրառմամբ: Տանկերը և այլ պրահատեխնիկան նպատակահարմար է խոցել վերելքներին, ճանապարհների ոլորաններում:

Եթե հակառակորդը ճեղքել-անցել է պաշտպանության խորքը, ապա պաշտպանվողների մարտական գործողությունները կարող են օջախային բնույթ կրել: Այդ դեպքում պահանջվում է ցուցաբերել ինքնուրույն գործելու հմտություն, նախաձեռնություն, միավորել անջատ-անջատ խմբերի գործողությունները գլխավոր խնդիրը լուծելու համար:

Լեռնաանտառային տեղանքը և ձմեռային պայմանները հակառակորդին թույլ են տալիս գործել առանձին ուղղություններով, մյուս կողմից էլ, դրանք նպաստավոր պայմաններ են ստեղծում նրան անջատ-անջատ ոչնչացնելու համար:

Նույնիսկ լիակատար շրջապատման դեպքում պաշտպանվող ստորաբաժանումները պարտավոր են համառորեն պահել լեռնանցքերը, ճանապարհների հանգույցները, հենակետերը, իշխող բարձունքները, կրակային բոլոր միջոցներով խոցել հակառակորդին, թույլ չտալ, որ ռեզերվը մոտենա նրան, աջակցել այն բանին, որ երկրորդ էջերունն ու ռեզերվը կարողանան հակագրոհի անցնել:

Նեղ գոտիով հակառակորդի հարձակման դեպքում բարենպաստ պայմաններ են ստեղծվում նրա առաջին էջերը երկրորդից կտրելու և երկուսն էլ մաս առ մաս ոչնչացնելու համար:

Եթե հակառակորդը փորձում է մատչելի տե-

դամասերով թեանցել կամ շրջանցել, ապա նրան, ինչպես նաև նրա դեասանտները ոչնչացնելու համար օգտագործվում են ռեպերվները:

Բոլոր մակարդակների հրամանատարները պետք է լավ յուրաքանչեւն աչն ճշմարտությունը, որ լեռնաանտառային տեղանքում նույնիսկ փոքր ուժերով հանկարծակի, սրընթաց հակագրոհները կարող են ապահովել պաշտպանության խնդիրների բարենհաջող լուծումը: Առավել ձեռնադու է այդ հակագրոհները անցկացնել վերնից ներքև, լեռնաշղթաների, ոչ մեծ գետերի հունների ու ճանապարհների երկայնքով՝ օգտագործելով թեանցումներն ու շրջանցումները:

Լիակատար հանկարծակիությունն ապահովելու համար նպատակահարմար է գրոհի անցնել գիշերը: Երկրորդ էշելոնով և ռեպերվով հակագրոհները սովորաբար կիրառվում են հակառակորդի այն ուժերի դեմ, որոնք թափանցել են պաշտպանության խորքը և հենակետերի միջտարածքները:

Եթե հակառակորդը պաշտպանության խորքն է թափանցել գիշերը և վավթել է այն բարձունքներն ու տեղանքը, որոնք պահելույ

կախված է որոշ պաշտպանության կայունությունը, նրան ոչնչացնելու կամ այդ տեղամասերը հետ գրավելու որոշումը կայացվում է արդեն մինչև լույսը բացվելը:

Գերազանցող ուժերով հակառակորդի հարձակման ժամանակ երկրորդ էշելոնով և ռեպերվով հակագրոհի անցնելը որոշ դեպքերում կարող է աննպատակահարմար լինել: Հակագրոհի դեպքում պորամասերն ու ստորաբաժանումները համառորեն պաշտպանում են պատրաստված դիրքերը, հենակետերը, բոլոր կրակամիջոցներով հակառակորդին կենդանի ուժի և տեխնիկայի կորուստներ են պատճառում՝ դրանով իսկ պայմաններ ստեղծելով միավորման երկրորդ էշելոններով հակագրոհի անցնելու համար:

Այսպիսով, ձմռանը լեռնաանտառային տեղանքում պաշտպանության կազմակերպումն ու անցկացումը, չնայած որոշ նմանություններին, խիստ տարբերվում են սովորական պայմաններում նրա կազմակերպումից ու անցկացումից, ուստի մարտի հաջողությունը, թեկուզ և փոքր ուժերով, կախված է դրանց իմացությունից և կիրառումից:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԿՐԱԿԱՅԻՆ ԽՈՑՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Գեներալ-մայոր Վ. Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, ՀՀ պինված ուժերի հրետանու պետ

Հակառակորդի կրակային խոցման պլանավորման, կազմակերպման և իրականացման հարցերը պաշտպանական մարտի կամ օպերացիայի նախապատրաստման ու վարման առավել կարեւոր հարցերն են: Պաշտպանության կայունությունը կախված է, այլ գործոնների հետ մեկտեղ, հակառակորդի հարձակվող զորքերի կրակային խոցման հնարամիտ կազմակերպումից, որը նախօրոք մանրակրկիտ կերպով պլանավորվում է՝ ելնելով ուժերի ու միջոցների ամկայությունից, տեղանքի բնույթից, հակառակորդի մարտական գործողությունների տակտիկայից, ժամանակի ամկայությունից, պաշտպանության նպատակներից ու խնդիրներից, համապարտային ավագ հրամանատարի և հրետանային պետի ցուցումների՝ կրակային խոցման խնդիրների հաշվառումով: Կրակային խոցումն իրականացվում է պորամիավորման (պորամասի) հրամանատարի կամ շտաբի պետի ղեկավարությամբ՝ ներգրավելով հրետանու, հետախուզության, ՀՕՊ-ի պետերին, ավիացիայի ներկայացուցչին, կարող են ներգրավվել նաև այլ պաշտոնատար անձինք:

Արդի պայմաններում հակառակորդի կրա-

կային խոցումը պլանավորվում և իրականացվում է սպառազինության բոլոր տեսակների համալիր կիրառմամբ: Հրետանու հետ մեկտեղ դրան մասնակցում են ավիացիոն քիմիական զորքերը, տանկային ստորաբաժանումները և այլ պորատեսակներ: Փորձը ցույց է տալիս, որ հրետանային հրանոթների ու ականանետների անբավարար քանակի դեպքում կարող են օգտագործվել նաև որոշ վենիթային միջոցներ (թնդանոթներ՝ 57 մմ Ս-60 և 100 մմ ԿՍ-19 և այլն):

Հակառակորդի կրակային խոցման հիմնական կատարողը հրետանին է, որին բաժին է ընկնում կրակային խնդիրների մինչև 70%-ը, իսկ որոշ դեպքերում՝ նաև ավելին: Հրետանին պետք է միշտ պատրաստ լինի խոցելու միջուկային ու քիմիական հարձակման միջոցները, բարձր ճըշգրտության վենքի տարրերը, հրետանին, տանկերը, հետևակի մարտական մեքենաները, հակատանկային և այլ կրակային միջոցները: Ճիշտ այդպես էլ այն կոչված է հարված հասցնելու հակառակորդի կենդանի ուժին, վայրէջքի հրապարակներում կանգնած ուղղաթիռներին, ՀՕՊ-ի միջոցներին, ռադիոէլեկտրոնային միջոցներին,

քանդելու հակառակորդի ամրաշինական կառույցները, ինչպես նաև կատարելու լուսային ապահովման, ծխածածկույթի կազմակերպման և այլ խնդիրներ:

Հրետանու կողմից կատարվող խնդիրների բավմագանությունը համապորային ու հրետանային ստորաբաժանումների, զորամասերի ու զորամիավորումների հրամանատարներին պարտավորեցնում է հրետանին պահել իր խնդիրների կատարմանը մշտապես պատրաստ մարտական վիճակում, պատրաստ լինել հրետանու մարտական հատկությունների արդյունավետ օգտագործմանը: Այդպիսի խնդիրների կատարումը ենթադրում է անձնակազմի գերազանց տեխնիկական պատրաստություն հրետանու նյութական մասի խնայողության գործում, ինչպես նաև անձնակազմի կողմից ռազմամթերքի բոլոր տեսակների իմացություն՝ դրանք մարտական հրաձգությանը նախապատրաստելու ունակությամբ, սահմանված նորմատիվների կատարմամբ: Բոլոր հրամանատարներն ու պետերը պետք է ժամանակին միջոցներ ձեռնարկեն հրետանային զորամասերի ու ստորաբաժանումների (հրետանային խմբերի) մարտական, տեխնիկական և թիկունքային համակողմանի ապահովման ուղղությամբ:

Նախքան հակառակորդի կրակային խոցման պլանավորման գծով որոշ հանձնարարականներ տալը անհրաժեշտ է նշել, որ կրակային խոցման պլանավորումը, որպես կանոն, կատարվում է օպերատիվ ու տակտիկական մակարդակներով: Առաջինը համապատասխանում է ռազմաճակատային ու բանակային օպերացիայի մասշտաբին, երկրորդը՝ զորամիավորումների, զորամասերի ու ստորաբաժանումների մարտի մասշտաբին:

Սույն հոդվածում նպատակ է դրվում տակտիկական օղակի հրամանատարներին ու շտաբներին օգնություն ցույց տալու պաշտպանությունում հակառակորդի կրակային խոցման պլանավորման ուղղությամբ:

Կրակային խոցման պլանավորումը զորամիավորումներում, զորամասերում ու ստորաբաժանումներում կատարվում է լուծվող խնդիրների, խոցման համար ներգրավվող ուժերի ու միջոցների մանրամասնումով:

Կրակային պլանավորման հիմնական բովանդակությունը կազմում են՝

1. Չորամիավորման (զորամասի, ստորաբաժանման) համար կրակային խոցման խնդիրների ծավալի որոշումը,

2. Խնդիրների բաշխումը խոցման ուժերի ու միջոցների միջև,

3. Բոլոր տեսակի ռազմամթերքների ծախսի որոշումը որոշակի ծավալով խնդիրների լուծման համար,

4. Պլանավորման արդյունքների ձևակերպումը վրաստաթղթերով,

5. Պլանավորման արդյունքները կատարողներին հասցնելը:

Հարկ է լավ յուրացնել, որ կրակը պլանավորելիս անհրաժեշտ է հաշվի առնել իրավիճակի կոնկրետ պայմանները, տեղանքի բնույթը, պաշտպանության առջև դրված խնդիրները, մասնակցող ուժերի ու միջոցների կրակային հնարավորությունները, հակառակորդի կազմը և մարտական գործողությունների բնույթը: Հրամանատարներն ու շտաբները պետք է բացառեն հակառակորդի խոցման հաջորդականության մեջ եղած շաբլոնն ու միօրինակությունը, անպայման կիրառեն ռազմական խորամանկության տարրեր, քոչող հրանոթներ (դասակ, մարտկոց), իրականացնեն կրակի կեղծ տեղափոխումներ, կիրառեն անսպասելի կրակ բացելու և կրակը դադարեցնելու հնարները, հանգամանորեն կազմակերպեն բոլոր մասնակցող ուժերի ու միջոցների համագործակցությունը:

Կրակային խոցման պլանավորումը հաշվարկների կատարման մեկ ավարտում գործողություն էլ է այն ճշտվում է հակառակորդի մասին հետախուզական նոր տեղեկությունների ու նոր խնդիրների ստացման համեմատ:

Հրետանու մարտական կանոնադրության մեջ (մասեր 1 և 2) նախատեսված են հրետանու հրամանատարների (պետերի) ֆունկցիոնալ պարտականությունները պաշտպանությունում հակառակորդի կրակային խոցման պլանավորման գործում: Բայց պետք է հաշվի առնել, որ ժամանակակից մարտում կրակային խոցման խնդիրն ունի համալիր բնույթ, ուստի այն պետք է լուծվի բոլոր զորատեսակների համագործակցությամբ: Այդ պատճառով էլ կրակային խոցման պլանավորումը պետք է դիտել որպես համազորային խնդիր: Ըստ եղած պրակտիկայի, այդ խնդիրը լուծվում է զորամիավորումում ստեղծվող կրակային խոցման պլանավորման խմբի սպաների կողմից: Պլանավորման խնդիրների առավել օպերատիվ լուծման նպատակով այդ խումբը կարող է գլխավորել զորամիավորման հրետանու պետը կամ զորամիավորման շտաբի պետը, ինչը կախված է այդ պաշտոնատար անձանց պատրաստականության մակարդակից:

Մենք հանձնարարում ենք կրակային խոցման պլանավորման խմբի աշխատանքի հետևելով մեթոդիկան:

Վիճակ: Բոլոր զորատեսակների պետերը զո-

քամիավորման (գորամասի) հրամանատարի կողմից պորատեսակների մարտական կիրառման վերաբերյալ որոշում ընդունվելու համար առաջարկություններ պատրաստելու ընթացքում իրենց շտաբներում (բաժիններում, բաժանմունքներում) պատրաստում են ելակետային տվյալներ աշխատանքային ու տեղեկատու աղյուսակների ձևով (ներգրավող միջոցների քանակը, դրանց կրակային հնարավորությունները, փնամթերքի առկայությունը, հրետանու առաջարկող խմբավորումը, ավագ պետի կողմից լրացուցիչ տրված միջոցները, դրանց կրակային հնարավորություններն ու խնդիրները), առաջարկություններ առաջին էջերի գնդերի (գումարտակների) ու ժեղացման վերաբերյալ, նշում են կրակային դիրքերի շրջանները, հակատանկային կրակի կազմակերպումը, ծավալման բնագծերն ու հակատանկային ռեպերվի կենտրոնացման շրջանները, պատրաստության ժամկետները և այլ տվյալներ:

Հետախուզության պետը (հետախուզական բաժնի սպան) պետք է պատրաստի հետախուզված նպատակակետերի (օբյեկտների) ցուցակը և դրանց կորդինատները, էկրակայություններ հակառակորդին գնահատելու, առաջարկություններ լրացուցիչ հետախուզում կազմակերպելու գծով:

II փուլ: Կրակային խոցման պլանավորման խմբի աշխատանքը սկսվում է պորամիավորման (գնդի) հրամանատարի կողմից պաշտպանական մարտի մտահղացումը հայտարարվելուց հետո: Նշանակված ժամին խմբի սպաները անցնում են աշխատանքի, որի ընթացքում որոշվում են՝

— պորատեսակների կրակային խնդիրները՝ կախված նրանց կազմից, կրակային հնարավորություններից և փնամթերքի առկայությունից (պաշտպանական մարտի ընթացքում դրանց ստացումից),

— պորատեսակների խմբավորումները, լրացուցիչ տրված և օժանդակող միջոցները,

— կրակային խնդիրները պաշտպանական մարտավարության տարբեր փուլերում,

— պորատեսակների, այդ թվում ավիացիայի կողմից լուծվող կրակային խնդիրների հաջորդականությունը, ընդ որում համագործակցության կողմից ու ստորաբաժանումների հետ համաձայնեցնելով լուծվող խնդիրները ըստ տեղի, ժամանակի ու բնագծերի,

— փնամթերքի հիմնավորված ծախսումը խնդիրների լուծման համար՝ ըստ պաշտպանական մարտի փուլերի:

Պլանավորման արդյունքները արտացոլվում են պաշտպանությունում համալիր կրակա-

յին խոցման քարտեզ-պլանում: Վերջնականապես մշակվում է նաև համալիր կրակային խոցման գրաֆիկը: Այդ պլանում գրաֆիկորեն ձևավորվում են՝

— հակառակորդի պորքերի դիրքը, նրա հիմնական խմբավորումները,

— կողմերի առաջավոր եզրը,

— յուրային պորքերը, նրանց սահմանափակող դիրքերը,

— համալիր կրակային խոցմանը մասնակցող պորատեսակների և բոլոր միջոցների խմբավորումները,

— այն օբյեկտները (նշանակետերը), որոնց կրակային խոցումը ծրագրված է,

— պորատեսակների (բոլոր մասնակցող ուժերի, այդ թվում ավիացիայի) խնդիրները,

— հրետանու կրակի կենտրոնացման տեղամասերը,

— հակատանկային ռեպերվների բնագծերը և կենտրոնացման շրջանները,

— արգելափակողների շարժական խմբի բնագծերը,

— հրետանու կրակի հասանելիության սահմանները և այլ տվյալներ:

Համալիր կրակային խոցման գրաֆիկում նշվում են՝

— կրակային խոցման մասնակցողները (ուժերը և միջոցները),

— հակառակորդի կրակային խոցման ժամանակամիջոցները,

— կրակային խնդիրների լուծման ժամանակը (սկիզբ-վերջ),

— բոլոր միջոցների կրակային խնդիրները,

— կրակ բացելու ադանաշանները:

Նշված փաստաթղթերը ստորագրում են շտաբի, հրետանու և ՀՕՊ-ի պետերը, հաստատում է պորամիավորման հրամանատարը:

Ինչպես նշվեց վերը, կրակային խոցման մանրամասն պլանավորումը կատարվում է բոլոր պորատեսակների շտաբներում: Այսպես, պորամիավորման հրետանու շտաբի կողմից կրակային խոցման պլանավորման արդյունքներն արտացոլվում են հետևյալ փաստաթղթերում.

— հրետանու մարտական կիրառման պլանը՝ բացատրական գրությամբ,

— հրետանու կրակի աղյուսակ,

— կարգադրություններ՝ խնդիրները տեղ հասցնելու վերաբերյալ:

Հրետանային խմբի շտաբում մշակվում են՝

— խմբի կրակի աղյուսակը,

— մարտական հրամանը,

— հրետանային խմբի հրամանատարի աշխատանքային քարտեզը:

Այն դեպքում, երբ գնդի հրետանային խումբը ստեղծված չէ, գնդի հրետանու պետը մշակում է հրետանու կրակի աղյուսակը, հրետանային դիվիզիոնի հրամանատարներին իրենց կրակային խնդիրները հասցվում են գնդի հրետանու կրակի աղյուսակից արված քաղվածքի ձևով:

Հակատանկային հրետանու կրակը նույնպես պլանավորում է գնդի հրետանու պետը: Նա ինքն էլ մշակում է ուղիղ նշանառությամբ կատարվող հրաձգության համար հատկացված միջոցների կրակի պլանը: Պլանը կազմվում է 1:10 000 կամ 1.25 000 մասշտաբի սխեմայի ձևով՝ կրակային խնդիրների բաշխման աղյուսակի հավելվածով:

Զորամիավորման (վորամասի) հրետանու կրակը և որպես անբողջություն վերցված պաշտպանությունում հակառակորդի կրակային խոցումը կարող են պլանավորվել ըստ հետևյալ ժամանակամիջոցների.

— հակառակորդի վորքերի առաջարժման և ծավալման կրակային արգելակումը,

— ծածկապաշտպան վորքերի կրակային օգնությունը (ապահովման գոտու ստեղծման դեպքում),

— հակառակորդի գրոհի կրակային հետմղումը,

— օգնությունը խորքում պաշտպանվող վորքերին,

— հակառակորդի կրակային խոցումը գրոհների ժամանակ:

Զորամիավորումների ու վորամասերի հրետանին պետք է պատրաստ լինի մասնակցելու հակառակորդի առավել կարևոր օբյեկտներին կրակային հարվածներ հասցնելուն, պատասխան (հանդիպական) հարվածներ ու հետագա հաջորդող վանգվածային հարվածներ հասցնելուն:

Վերջում հարկ է նշել, որ հակառակորդի կրակային խոցման օպերատիվության և պլանավորման որակի համար պատասխանատու պաշտոնատար անձինք պետք է լինեն բարձր պատրաստականություն ունեցող մասնագետներ, որոնք կարողանան կիրառել ու արմատավորել տեխնիկական միջոցները, այդ թվում է՝Մ-ն ու անհատական համակարգիչները, ունենան աշխատանքի համար համապատասխան հանդերձավորում: Շատ կարևոր է, որ կրակային խնդիրները կատարողներին հասցվեն ժամանակին և կազմակերպի հսկողություն կրակային խնդիրների կատարմանը նրանց պատրաստ լինելու նկատմամբ:

ՈԱԶՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

ՄՈՏՈՀՐԱԶԳԱՅԻՆ ԳՈՒՄԱՐՏԱԿԻ ԻՆՏԵՆՆԵՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Գնդապետ Ա. Գ. ՄԱՐԴՆՆՅԱՆ, ՀՀ ՊՆ ինժեներային զորքերի վարչության պետ

Լեռնային տեղանքի ռելիեֆը բնորոշվում է լեռնաշղթաների կտրուվածությամբ, դժվարանց տեղամասերի առկայությամբ, ճանապարհների սահմանափակ քանակով, ուղիների ու ճանապարհից դուրս կատարվող շարժման նախապատրաստման դժվարությամբ, ժայռային ապարների ու քարքարոտ բնահողերի գերակշռությամբ, լեռնային գետերի գետահովիտների առկայությամբ, ծովի մակարդակից մեծ բարձրությամբ, ինչը բացասաբար է անդրադառնում մեքենաների տեխնիկական հնարավորությունների ու արդյունավետության, ինչպես նաև անձնակազմի կողմից առաջադրանքների կատարման վրա: Իրադրությունը բարդացնում է և այն, որ կլիման լեռներում խիստ չորային է, գետերի ջրի մակարդակը կարճ ժամանակի ընթացքում կարող է կտրուկ փոխվել: ՈՒստի բնական է, որ լեռնային տեղանքն էական ապդեցություն է գործում ինչպես զորքերի մարտական գործողությունների, այնպես էլ նրանց ինժեներային ապահովման վրա:

Լեռներում զորքերի հիմնական ուժերը կենտրոնացվում են հակառակորդի հարձակողական գործողությունների առավել հավանական ուղղությունների տեղամասերում: Դրանք կարող են լինել ճանապարհներ, սարահարթեր, գետահովիտներ: Հակառակորդի կենդանի ուժի ու մարտական տեխնիկայի առաջարժման համար նվազ մատչելի տեղամասերը պաշտպանվում են ավելի քիչ ուժերով՝ դիտակետերի, ինժեներային արգելափակոցների սարքավորման, պարեկության և այլ միջոցներով:

Հնարամտորեն օգտագործելով լեռնային բարդ տեղանքը՝ կարելի է աննշան ուժերով հաջողությամբ պաշտպանվել իր ուժերով բավականորեն գերակշռող հակառակորդից և ջախջախել նրան մարտի ընթացքում:

Պաշտպանությունը լեռներում իրականացվում է, որպես կանոն, իրարից անջատ տարբեր ուղղություններով: Մոտոհրաձգային գումարտակի պաշտպանության շրջանն այստեղ զգալիորեն ավելի մեծ է, քան դաշտային տեղանքում: Դիրքերը սարքավորելիս հնարամտորեն օգտագործվում են բարձունքները, որոնց վրա փորվում են բավմահարկ խրամատներ: Տեխնիկական ու նյութական միջոցները թաքցնելու համար

օգտագործվում են տեղանքի բնական ծալքերը: Պաշտպանության ինժեներային ապահովման նպատակն է՝

— հակառակորդի խոցող միջոցներից յուրային զորքերի անձնակազմի ու մարտական տեխնիկայի պաշտպանության ապահովումը, պայմանների ստեղծումը անարգել ու արագորեն առաջ շարժվելու և մանևրելու համար,

— հակառակորդի առաջխաղաչումն ու վորաշարժը դժվարացնելը և նրան կորուստներ պատճառելը ինժեներային միջոցների օգնությամբ, ինչը, հակառակորդին լրացուցիչ կորուստներ հասցնելու շնորհիվ, նախապայմաններ է ստեղծում կրակային միջոցների առավել արդյունավետ կիրառման համար:

Մոտոհրաձգային գումարտակի ինժեներային ապահովման հիմնական խնդիրներն են՝

— տեղանքի և հակառակորդի միջոցառումների ինժեներային հետախույզումը,

— ինժեներային արգելափակոցների սարքավորումը և քանդումներ կատարելը,

— պաշտպանության շրջանի ամրաշինական սարքավորումը,

— ճանապարհների պատրաստումը և պահպանումը,

— տեղանքի ստուգումը ականների և այլ պայթյունավտանգ միջոցների առկայության առումով,

— տեղանքի ականավերծումը և մաքրումը այլ պայթյունավտանգ միջոցներից,

— ջրի հայտնաբերումը և մաքրումը,


— զորքերի ապահովումը ինժեներային միջոցներով,

— օգնության ցուցաբերումը զորքերին այն դեպքում, երբ նրանք կատարում են հատուկ ինժեներային տեխնիկա և ինժեներային զորքերի ստորաբաժանումների հետ համագործակցություն պահանջող բարդ խնդիրներ:

— քողարկման միջոցառումները:

Ինժեներային հետախույզման համար սարքավորվում են ինժեներային դիտակետեր (ԻԴ): Դրանք սարքավորվում են բարձունքներում, առաջին էջերի դիրքերում (կամ մոտերքում)՝ հակառակորդի անմիջականորեն դիտարկելու համար: Օգտագործելով դիտարկման օւլտիկական սարքեր՝ ԻԴ-երը պետք է ի հայտ բերեն

ՄՈՏՈՂՐԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԽԱՐՏԱԿԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԻՆՓԵՆՏԻՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ
Հակառակույտ



ԱՇԽԱՏԱՐՆԵՐԻ ՎՃՏՎՈՒՄԱՆ ԳԼԽԻՑԸ: Առաջին հերթին՝ ինժեներային արգելափակիչների տեղադրում, կրակազուտ մարդու (ծանրի հատում), խրամատների կառուցում թողր կրամային միջոցների համար, դիտակենտի սարքավորում, բուժկենտի կառուցում, խրամատների վերածովկեր յուրաքանչյուր ջրի համար, հենավաններում խրամատների համակարգի տեղեկում, քոսարկման աջակցություններ: Երկրորդ հերթին՝ վաշտերի և դասակների հենավանների սարքավորման ավարտում, պահեստային խրամատներ, կեղծ օբյեկտներ, իրամատարական դիտակենտների կառուցվածքներում:

հակառակորդի գործողությունները՝ ուղղված ակառադաշտերի և դրանցում անցումների ստեղծմանը, ինչպես նաև դիրքերի ամրաշինական սարքավորմանը: Առավել ճշգրիտ տեղեկությունների ձեռքբերման համար առանձնացվում են որոնման խմբեր:

Ըստ հնարավորության ԻԳ-երից բացի սարքավորվում են նաև վերերկրյա լուսանկարման կետեր, որոնք օգտագործում են հեռվից լուսանկարող սարքեր՝ առանձին օբյեկտների և ընդհանուր տեղանքի լուսանկարման համար:

Բոլոր ճանապարհների վրա դրվում են հակատանկային արգելափակոցներ՝ ինչպես ոչ պայթուցիկ, այնպես էլ պայթուցիկ: Պայթեցման եղանակով քանդման ենթակա են կամուրջները, ուղեկամուրջները և ճանապարհային այլ օբյեկտներ: Առավել կարևոր ուղղություններում (բնական խոչընդոտների հետ գուգակցված) պատրաստվում են արգելափակոցների հանգույցներ, որոնք գործողության մեջ են դրվում մարտի ընթացքում:

Հետևակի համար մատչելի բոլոր ուղղություններում գորքերի դիրքերի առաջ, դրանց արանքներում ու սահմանագծերում դրվում են հակահետևակային արգելափակոցներ, տեղադրվում են հակահետևակային ականներ:

Այն պահից սկսած, երբ մոտոհրաձգային գումարտակը պաշտպանական դիրք է գրավում, անմիջապես ձեռնամուխ են լինում նրա ամրաշինական ապահովմանը: Յուրաքանչյուր հրաձիգ պատրաստում է խրամատ՝ պառկած վիճակից կրակելու համար, այնուհետև այն վերասարքավորում է չորած ու կանգնած դիրքերից կրակելու համար: Հետո տարանջատ խրամատները միացնում պատրաստում են մի ընդհանուր խրամատ՝ ստեղծելով դիրք հրաձգային ջոկի համար: Այնուհետև, ջոկի խրամատները միացնելով, ստեղծում են դասակի հենակետ: Դասակների հենակետերն էլ միացնելով՝ պատրաստում են վաշտի հենակետ:

Յուրաքանչյուր դասակի համար սարքավորում են ջոկի մեկ-երկու պահեստային և կեղծ

դիրքեր, վաշտի հենակետում՝ մեկ-երկու պահեստային և կեղծ դասակային հենակետեր: Բոլոր կրակային դիրքերը սարքավորվում են մեկ-երկուական խրամատներով, իսկ անձնակազմերը ծածկվում են: Սարքավորվում են նաև դասակների, վաշտերի, գումարտակների հրամանատարների հրամանատարական դիտակետեր: Յուրաքանչյուր դասակ պետք է ունենա բլինդաժ, վաշտը՝ թաքստոց: Հատուկ և բեռնատար մեքենաների համար սարքավորում են ապաստարաններ կամ դրանք տեղավորում են տեղանքի բնական ծալքերում: Բոլոր սարքավորված օբյեկտները միմյանց միացվում են միջանցքներով:

Ավելի վաղ հակառակորդի կողմից գրավված շրջանները հետ գրավելու, հետ գրավված երթուղիներով շարժվելու դեպքում անցկացվում է ստուգում ականների առկայության առումով: Առանձին ականներ հայտնաբերելիս կատարվում է ավելի մանրակրկիտ ստուգում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ տեղանքի համատարած ականավերծում: Բնական մաքուր աղբյուրների բացակայության դեպքում պաշտպանության յուրաքանչյուր գումարտակային շրջանում սարքավորում են ջրի հայտնաբերման ու մաքրման դաշտային կետ՝ 2,5 – 3 խոր. մ/ժամ արտադրողականությամբ՝ օգտագործելով պորային ֆիլտրող կայաններ՝ արդիականացված ավտոմատիկորեն ֆիլտրող կայան (ԱՄԿ-3) կամ շարժական ֆիլտրող կայան (ՇՖԿ-2,5):

Այլ պորատեսակներով ինժեներային ապահովման խնդիրների կատարման համար նրանք ապահովվում են սակրային գործիքներով, քողարկման տաբելային միջոցներով, հատկացվում է ինժեներային տեխնիկա, կիրառվում են պայթեցման աշխատանքներ:

Չորքերի քողարկումը կատարվում է բոլոր պորատեսակների կողմից՝ օգտագործելով տեղանքի քողարկող հատկությունները, կիրառելով ինչպես ձեռքի տակ եղած, այնպես էլ տաբելային միջոցները, քողարկման համար կիրառվում է նաև տեխնիկայի և օբյեկտների ներկում:

ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ

ՈԱԶՄԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՀՀ-ի ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ԱԳՐԵՄԻԱՅԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԲԱՑԱՀԱՅՏԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Գնդապետ Ա. Ա. ՄԱՐԳՍՅԱՆ, ՀՀ ՊՆ հետախուզության և ՌԷՊ-ի վարչության պետ

Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինան կրում է պաշտպանական բընույթ, և հետախուզությունն իր խնդիրները կատարում է՝ ելնելով դոկտրինայի այդ բնույթից:

Ռազմական հետախուզությունն այնպիսի միջոցառումների մի ամբողջություն է, որոնք անցկացվում են բոլոր աստիճանների հրամանատարների կողմից՝ գործող կամ հնարավոր հակառակորդի, նրա ՁՈՒ-ի ռազմատնտեսական և գիտատեխնիկական ներուժի, ինչպես նաև ռազմական գործողությունների թատերաբեմի մասին տեղեկությունների հավաքման նպատակով:

Ռազմական հետախուզության կարևորագույն խնդիրն է երկրի ռազմաքաղաքական դեկավարությանն ապահովել այնպիսի ինֆորմացիայով, որն անհրաժեշտ է անվտանգության, ՁՈՒ-ի շինարարության, էկոնոմիկայի ամրապնդման միջոցառումների ճիշտ պլանավորման համար, արտաքին քաղաքականության առաջնային ուղղությունների որոշման համար:

Ռազմական հետախուզության դերը անչափ մեծացել է ժամանակակից պայմաններում, հատկապես ՀՀ-ի համար:

ԽՍՀՄ փլուզումից հետո ՀՀ-ն հայտնվեց նոր գեոքաղաքական միջավայրում, թշնամաբար տրամադրված պետությունների՝ Ադրբեջանի և Թուրքիայի հարևանությամբ:

Չնայած ՀՀ դեկավարության ջանքերին՝ ԼՂՀ-ի և Ադրբեջանի միջև ծագած կոնֆլիկտը լուծելու քաղաքական բանակցությունների միջոցով՝ Ադրբեջանը շարունակում է պարզացնել իր ՁՈՒ-ի հարձակողական ներուժը և պատրաստվում է կոնֆլիկտը լուծելու ուժային մեթոդներով:

ԼՂՀ-ի դեմ ադրբեջանական հրամանատարությունը կենտրոնացրել է իր ՁՈՒ-ի մի հզոր խմբավորում, որը ներառում է 8 մոտոհրաձգային, 3 հրևտանային բրիգադ, 7 գունդ, ավելի քան 100 տանկ, շուրջ 300 հետևակի մարտական մեքենա ու վրահատրանսպորտյոր: ՁՈՒ-ի մի այլ խոշոր խմբավորում Ադրբեջանը ծավալել է հայադրբեջանական սահմանի երկայնքով: Այն ներառում է 4 առանձին բրիգադ և 5 մոտոհրաձգային գունդ, մոտ 80 տանկ, 250 հետևակի մարտական մեքենա և վրահատրանսպորտյոր, մոտ 170 հրանոթ և ականանետ:

Ադրբեջանի ՌՕՈՒ-ն իրենց կազմում ունեն շուրջ 90 ինքնաթիռ և 30 ուղղաթիռ:

Այդ խմբավորումների կազմը, տեղակայումը, օպերատիվ և մարտական պատրաստությունը ուղղված են ԼՂՀ և ՀՀ տարածքների վրա հանկարծակի հարվածներ հասցնելուն:

Ակտիվ ռազմական նախապատրաստություններ են անցկացվում նաև Թուրքիայում:

Թուրքիան ունի ավելի քան 600-հազարանոց բանակ, որը համարված է սովորեցված է ՆԱՏՕ-ի չափանիշներով, և ամենահզոր պետությունն է մերձավորարևելյան ռազմական գործողությունների թատերաբեմում:

